Գ. Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԲԵՐԽՍՏԱՓՈՒ
ԿԱՐԱ-ՄՈՒՍԱ

Հրատ. Դ. Մելիք-Կարագեոզեանի № 5.

78(47.925)(092 Կարա-Մուրզա)
Կ-29

ՍՏԱՑՎԱԾ Է 1951 Թ.

ՔՐԻՍՏՈՓՈՐ

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱ

(նրա կեանքն ու գործունէութիւնը)

1854—1902

ՅՈՎ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Ա 20212 6760

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Վրաց Հրատարակչ. Ընկերութեան
1904

Дозвол. Цензур., г. Тифлисъ, 11 ноября 1903 г.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գլուխ առաջին

I.

Հասարակական գործիչների գնահատելը քաղաքակիրթ ազգերի և հայերիս մէջ. հայ գեղարուեստագէտները և նոցա վիճակը. Քրիստաֆոր Կարա-Մուրզան և նրա մատուցած ծառայութիւնը։ Հայկական ձայնանիշներ—„մանրուսումն“։ Գէորգ դ. կաթուղիկոսի մատուցած ծառայութիւնը։ Կարա-Մուրզան իբրև հիմնադիր հայ քառաձայն երգեցողութեան։

II.

Քրիստաֆոր Կարա-Մուրզայի ծագումը, նրա սէրը դէպի երաժշտութիւնը, երաժշտութեան սիրելուն նպաստող անձերը և նրա կրթութիւնը։ Կարա-Մուրզան իբրև գեղարուեստասէր. երաժշտական կրթութիւնը. թատրոնական ներկայացումներ և խմբերգեր։

III.

Կարա-Մուրզայի գործունէութեան ծարաւը. նրա տրամադրութիւնը հայրենիքից հեռանալուց առաջ. ուղղորդութիւնը դէպի Կովկաս 1882 թ. աննպաստ կարծիքներ քառաձայնը Կովկասում տարածելու վերաբերմամբ։ Թիֆլիզի բանիմաց մարդկանց խրախուսանքը և ընդունելութիւնը։ Երկու տարի Թիֆլիզում։ Առաջին երեք համերգները Թիֆլիզում. հասարակութեան վերաբերմունքը նրա համերգներին։

IV.

Կարա-Մուրզան Բագուում 1885 թ. համերգների յաջողութիւնը այնտեղ. նրա գործունէութիւնը Բագուում մինչև 1887 թ. ամառը. արտասահման գնալը, նոր ծանօթութիւններ։ Հեղինակաւոր անձանց կարծիքները. Ալիշեանի նամակը։ Ղարա-սու-Բազարի երկաթ. համերգը։ Բագուում առաջին անգամ պատրաստը քառաձայն երգելը և արդիւքը. նրա պարապմունքները Բագուում։ Աղէքսանդր III Կայսեր և Մակար կաթուղիկոսի Բաղու գալը և Կարա-Մուրզայի նրանց դիմաւորելը իր խմբով։

V.

Կարա-Մուրզան վերստին Թիֆլիզում։ Մարդասիրական ընկերութեան յօբէլեանը։ Հայրենիք վերադառնալը. Նոր-Նախիջևանի հրաւէրը։ Շուշան օպերան։ Երաժշտական դպրոց բանալու մտադրութիւնը։ Արծրունու յօբելեանը. խմբով Ատարախան գնալը և այնտեղի գործունէութիւնը. նոր երգեր։ Գամառ-Բաթիպան Բագուում։ Յիշողութիւններ նրա համերգի մասին։

VI.

Կարա-Մուրզայի Թիֆլիզի և Պետրովսկ քաղաքի համերգները։ Բագուի երկաթ. խումբը։ Ատրպետի յիշողութիւնները այդ խմբի մասին։ Վիեննայի և Ջիկագոյի ցուցահանդէսները. Կարա-Մուրզայի մտադրութիւնը։ Կարա-Մուրզան Ախալցխայում, Արաքսումանում, Ախալքալակում. նրա համերգների տպաւորութիւնը. Գամառ-Բաթիպայի մահը. Կարա-Մուրզայի ոտանաւորը. նրան Էջմիածին հրաւիրելը և Բագուայ խմբի նրան ճանապարհ դնելը։

VII.

Կարա-Մուրզան Էջմիածնում. առաջին տպաւորութիւնը. նրա հայացքը Էջմիածնի մասին. ընտանիքը տեղափոխելը Երևանից Էջմիածին. Ճեմարանում առաջին դասը և նրա տպա-

ւորութիւնը։ Քառաձայնը հեմարանում. Նրա գործունէութեան ծրագիրը. գործունէութիւնը. աչակերտների վերաբերմունքը։ Վաղարշապատի, Երևանի, Աղէքսանդրապօլի և Իգդիրի համերգները։ Խրիմեան Հայրիկի Էջմիածին գալը. Կարա-Մուրզայի դիմաւորելը. տեսակցութիւնը կաթուղիկոսի հետ։ Կարա-Մուրզան փաստի գաղաթնակէտում. Նրա ծրագրի խորտակուիլը և Էջմիածնից հեռանալը. հրաժեշտ աչակերտների հետ. մի նուէր ի դիմաց աչակերտների։ Նամակ „Մշակի“ խմբագրութեան իր ծրագրի մասին։

VIII.

Դարձեալ թափառելը. Թիֆլիզի, Նոր-Նախիջևանի և Բաղուի համերգները. Շուշի քաղաքի խմբերգերը և յիշողութիւններ նրա խմբերգերի մասին։ Գորի, Բօրժոմ, Գանձակ քաղաքներում նոր խմբեր կազմելը։ Մի չրջաբերական նրա քառաձայնի առիթով, միաձայնի ջատագովութիւնը։ Խռովութիւններ հեմարանում. աչակերտների Թիֆլիզ գալը. Կարա-Մուրզայի խնամքը նոցա վրայ։ Բաղուի համերգը. տասնամեակի կատարելը. Սիգնախի, Թելաւի, Նուխու և Ջաքաթալայի համերգները. մի միջնադէպ Թելաւում։

IX.

Կարա-Մուրզան Կովկասի հիւսիսային և Ռուսաստանի հարաւային քաղաքներում. „Казбекъ“ լրագրի թղթակցի կարծիքը. նրա համերգներին մասնակցողները. այդ համերգների բարերար ազդեցութիւնը։ Կարա-Մուրզան Անդրկովկասի քաղաքներում. Փարիզի ցուցահանդէսը. նրա մտադրութիւնը։ Շամախի քաղաքից գրած նամակը իբրև բնորոշող, ամեն քաղաքներում թողած, նրա համերգների բարերար ազդեցութեան։

X.

Կարա-Մուրզան ուսուցիչ առևտրական դպրոցում։ Կովկասի ցուցահանդէսը և Կարա-Մուրզայի մասնակցութիւնը։ Նրա հասարակական գործունէութիւնը. նրա կարծիքը երա-

ժչտութեան մասին։ Ճամբրգների հաշիւը. կրած վնասը. նիւթական դրութիւնը. նրա գործունէութեան ամփոփումը. հեղինակութիւնները. նրա մասին գրուածքներ զանազան լրագիրներում։ Կարա-Մուրզայի երեխաները և նրա հոգսը նրանց կրթութեան վրայ։ Նրա մահը։

Գլուխ առաջին

ՆԵՐԱՇԽԱՐՀ

I.

Հասարակական գործիչների գնահատելը քաղաքակիրթ ազգերի և հայերիս մէջ. հայ գեղարուեստագէտները և նոցա վիճակը։ Գրիգոր Գաֆար Կարա-Մուրզան և նրա մատուցած ծառայութիւնը։ Հայկական ձայնանիշներ—„մանրուսումն“։ Գէորգ Դ. կաթուղիկոսի մատուցած ծառայութիւնը։ Կարա-Մուրզան իբրև հիմնադիր հայ քառաձայն երգեցողութեան։

Ամեն մի քաղաքակրթուած ժողովուրդ բարձր է գնահատում իր այն մարդկանց, որոնք կազմում են նրա փառքը ազգային գործունէութեան զանազան ասպարէզներում։ Մի ժողովրդի հոգու ստեղծագործութեան ներկայացուցիչները քանի բազմաթիւ են, այնքան նա հարուստ է մտաւորապէս, այնքան նա նպաստող է ընդհանուր մարդկութեան յառաջադիմութեան և այնքան առաւել նա իրաւունք ունի յարգանք վայելելու ուրիշ ազգերից։ Մի ազգ, յարգելով և սիրելով իր յառաջադէմ—աչքի ընկնող, բնատուր ձիրք ունեցող զաւակներին, յարգում է իրան, գիտակցում է իր պատիւը, քանի որ, այդ յառաջադէմ ուժերն են կազմում նրա փառքը, նրանցով է ճանաչվում նրա հոգեկան ուժեղ կազմը և նրա բարոյական ոյժը։ Միշտ թանգ են գնահատում լուսաւոր ազգերը,

զանազան ասպարէզներում գործող, իրանց կենդանի գործիչներին և մեծ պատիւ ու յարգանք են ցոյց տալիս նրանց մահուանից յետոյ։ Մի ժողովրդի ինքնաճանաչութեան զարգացման չափը ոչ մի բանում այնքան նկատելի չէ, որքան դէպի իր հանգուցեալ գործիչը ցոյց տուած խորը թախիծի ժամանակ։ Մեծամեծ չքեղ մահարձաններ կանգնեցնելը, մահուան հանդիսաւոր տարեդարձների կատարումը, և որ գլխաւորն է, հանգուցեալ գործիչների յիշատակին նուիրած զանազան հանրամարդկային և ազգօգուտ հաստատութիւնների հիմնելը, գալիս են ապացուցանելու մի ազգի երախտագիտութեան չափը։ Մենք, հայերս, թէև սկսել ենք գնահատել մեր գործիչներին, բայց, պէտք է ասել, որ մինչև այժմ մենք գնահատել ենք, մեծ մասամբ, միայն նրանց մահից յետոյ։ Հայկական ինքնաճանաչութեան գործունէութեան ասպարէզից, ուսումնական թուականներից սկսած, կամաց-կամաց իջնում են նրա ամենալաւ աստղերը։ Ճակատագիրը հեռացնում խլում և տանում է մեր հասարակական ասպարէզներում գործողներին, գրականութեան գոհարներին և հայ գեղարուեստի պարծանքներին։ Հայկական գեղարուեստական աշխարհում հայ գործիչների թիւը մատներով կարելի է համարել։ Ունեցել ենք և ունենք մենք նկարիչներ, քանդակագործներ, երգիչներ, երաժիշտներ, բայց նոցա մեծ մասը գործել են և գործում են օտարների մէջ, չգտնելով հայ ժողովրդից քաջալերութիւն։ Գեղարուեստը դեռ այնքան խորը չէ թափանցել հայ մասսայի մէջ և գեղարուեստագէտը մեր մէջ դեռ չի կարող ապահով նուիրուել իր ստեղծագործութեան։ Քիչերն են, որ

կռուելով ծանր հանգամանքների դէմ, մնում են իրանց փշոտ ասպարէզի վրայ և նրանցից շատերը այդ կռուի մէջ զոհ են գնում իրանց եռանդին։ Մեզ համար, ի հարկէ, գնահատելի է այնպիսի գեղարուեստագէտը, որ մաքառումով ու զոհողութիւնով գործում է իր ժողովրդի համար, ճանաչեցնել է տալիս գեղեցիկը, զարգացնում է նրա ճաշակը և ազնուացնում է բարքերը։ Բայց այդպիսի քչերին էլ՝ գնահատում ենք միայն մահուանից յետոյ։ Ահա այդ սակաւաթիւներին է պատկանում հանգուցեալ, հայ աշխատաւոր մշակ, ազգային և ժողովրդական երգերը ժողովրդականացնող, օրգանիզատոր—երաժիշտ Քրիստափոր Կարա-Մուրզան, որը իր անխոնջ և տոկուն աշխատանքով, նուիրական սիրով, հաւաքեց հայ ժողովրդի հեծեծանքների ամէն տեղ սփռուած ձայները և նոյն ժողովրդի ձեռքով կառուցեց ժողովրդական երգեցողութեան մի փառաւոր տաճար ու զարմանալի եռանդով կանոնաւորեց մեր ազգային ժողովրդական և եկեղեցական երգերը։ Միշտ իրան համեստ պահող, իր գործի մէջ ինքնամոռացութեան հասնող, այդ արժանաւոր գեղարուեստագէտը թէև հանգաւ, բայց նրա ամենուրէք հրդեհած սրբազան բոցը, որ վառեց հայ սրտերում, դեռ չուտով չի հանգչի։ Նրա ջանքերով ներդաշնակած ազգային-ժողովրդական երգը, դեռ երկար ժամանակ, պիտի յիշեցնի մէջ թէ նրա մահը, այլ նրա կենդանի գործի վեհութիւնը։ Հանգաւ նա՝ ճակատագրից ընկճուած, արդէն վաղուց քաքայուած ոգերով, նախ քան նրա եռանդի նուազելը, երբ դեռ ևս նրա ուղեղում, մէկը միւսի ետեւից, շարայարվում էին ինքնուրոյն ստեղծագործու-

թեան նորանոր պտուղներ՝ լի ոգևորութիւնով. Կարծէք մի դառը ճակատագիր հալածում է հայ երաժշտութեան զարգացման. երբ ուրիշ ազգերի մէջ օր օրի վրայ աւելանում է երաժիշտների թիւը, զարգանում է երաժշտութիւնը, մեր երաժշտագէտները իջնում են ասպարէզից։ Դուցէ միակ պատճառը ծանր պայմաններն են, որոնց մէջ գտնվում է հայ երաժիշտը. բացի քաղաքերանքի բացակայութիւնից, մեծ աշխատանք է պահանջվում հայ երաժշտից, հայ երգը մշակելու և նորից ասպարէզ բերելու համար. և իսկապէս ինչքան արգելքների և արշաւանքների է ենթարկուել ազգային երգեցողութիւնը. դարերից ՝ի վեր, նա ենթարկուել է՝ հրէայի երգեցողութիւնից սկսած, պարսկի, արաբի, մոնղոլի, քրդի և տաճկի երգեցողութեան և դեռ պէտք է զարմանալ, որ հայը իր ազգային ինքնուրոյն սովորութիւնների, պաշտամունքների հետ, պահել է իր ազգային երգեցողութիւնը. թէև աստրական, պարսկական, թրքական և քրդական մելամաղձոտ երգերը թողել են իրանց ազդեցութիւնը հայ երգի վրայ, աղաւաղել և մեռցրել են հայ ժողովրդի կենսունակ եղանակները։

Ժողովրդական երգը, ծամածռած, ամեն մի երգչի՝ իր անհաճոյ, ինքնուրոյն մոցրած նորութիւններից աղաւելու համար, հարկաւոր էր մեծ ժամանակ, ոյժ և գործին նուիրուող անձ. պէտք էր մեծ ազգասիրութիւն, եռանդ, սէր և տոկունութիւն, որ չը ձանձրանար հայկական նախկին երգեցողութիւնից, յաղթելով ամեն արգելքներ, ժողովրդական երգը սիրելի դարձնէր ամենքին։

Ազգային ժողովրդական երգը, երաժշտական ճաշակ ունեցողներից, արհամարհուած էր ոչ թէ նրա ազքատութեան ու վատութեան պատճառով, այլ նրա համար, որ նա երգվում էր անճոռնի, «ձայնը գլխին գաժ», անախորժ, աւելորդ կկլոցներով, ելևէջներով և երգողի քմքի համաձայն ձգձգումներով ու անկանոն արտասանութիւնով։ Ժողովրդական երգը, սիրելի դարձնելու համար, պէտք էր պատրաստութիւնով օժտուած մի մարդ, որ բացի եղանակները քառաձայնի վերածելուց, պահելով բուն հայկական ժողովրդական երգի բնաւորութիւնը, նուրբ ճաշակով եղանակները դարձնէր քաղցր, գուրեկան և տար նոցա կենդանութիւն։ Դա ավոդուեց Կարա-Մուրզային, որը իր գեղեցիկ կոմպոզիցիաների մէջ ճշտութեամբ տուել է այն հրաշալի, բերնից բերան պտտող, ժողովրդական եղանակները՝ որոնց ստեղծել է ժողովուրդը իր վշտի և ուրախութեան բոպէներին և այժմ շնորհիւ նրան, ժողովրդական երգի նշանակութիւնը բարձրացաւ և այդ բարձրացնելու փորձը յիրաւի պատկանում է միմիայն Կարա-Մուրզային, քանի որ նա հիմք դրեց քառաձայն ներդաշնակ խմբական երգեցողութեան։ Հայկական հոգևոր երգերի եղանակները, կարգի բերելու և անվնաս պահելու փորձերը եղել են դեռ շատ հնուց. թէև պատմութիւնը ոչինչ չի հաղորդում հայոց եկեղեցական եղանակների և խազերի ծագման մասին, որոնցով ձայնագրվում էին եղանակները։ Հինգերորդ դարից սկսած՝ տաճերի գիւտի և սուրբ Գրքի թարգմանութիւնից յետոյ, զարգանում է եկեղեցական պաշտամունքը, ժամերգութիւնը և հանդէս են գալիս մի շարք երգիչներ, յօրինվում են շարաան-

ներ, տաղեր, գանձեր և այլ հոգևոր երգերի տեսակներ և առաջ է գալիս «մանրուսումը»։ Հին երաժիշտները, «մանրուսումն» ասելով, հասկանում էին՝ ուսումն հոգևոր երգերի, եղանակների և խաղերի (ձայնանիշների) մասին. «մանրուսումը» թէև մեծ ծառայ է ստանում մինչև տասնեւհինգերորդ դարը, բայց «մանրուսումն» իմացողների թիւը շատ քիչ է լինում, քանի որ իմացողները գաղտնապահ էին, գլանում էին աւանդել շատերին և կրում էին, մինչև անգամ, իմաստուն կամ փիլիսոփայ տիտղոսը՝ «մանրուսման» մէջ հմուտ լինելու պատճառով։ Այդ է պատճառը, որ թէև նախնի հայրերից մեր ձեռքը հասել են շարականներ, հոգևոր երգեր, տաղեր և գանձեր, որոնց մեծագոյն մասը ձայնագրած են խաղերով, բայց այդ խաղերը մեզ համար մեռած տառեր են, որոնց ձայների զորութիւնը —հետևաբար հին եղանակները—համարեա անծանօթ են մնացած, քանի որ այդ գիտութիւնը խպաս մոռացութեան էր մատնուած և գուցէ անհետ կորչէր դոցա նշանակութիւնը, եթէ որ հանգուցեալ Գէորգ դ. կաթուղիկոսը առանձին հոգ չդատէր և այդ բազմաթիւ խաղերի բարդ ուսումը չդիմեր ազգային ձայնանիշների հետ սիատեմին։ Օժտուած լինելով երաժշտական ձիրքով և հմուտ եկեղեցական երգեցողութեան, նա կաթուղիկոսական գահ բարձրանալուց յետոյ, իրան օգնական հրաւիրելով հայ հոգևոր եկեղեցական եղանակների հմուտ անձնաւորութիւններին և յայտնի ձայնագրագէտ Նիկողայոս Թաշճեանցին, այդ նախնի խաղերի թիւը կրճատելով պահեց հիմնական ութը ձայները իրանց ձևերով և յարմարեցրեց եւրոպական երաժշտութեան, ստեղծելով հայ

երաժշտութեան համար բոլորովին նոր սիստեմ, հա-մեմատ Եւրոպականի։ Բոլոր եկեղեցական երգերը, շարականները և տաղերը, վերածելով ձայնանիշների, ազատեց յաւէտ կորստից և մատչելի դարձրեց ամենքին։ Նա դաւառներից հաւաքեց քահանաներ և ուսուցիչներ, սովորեցնել տուեց նրանց նոր ձայնանիշները և ընտելացնելով նրանց ձայնագրութեան հետ, նոր տպած ձայնագրած հոգևոր երգերով, ուղարկեց իրանց տեղերը։ Եկեղեցիներում մինչև այն ժամանակ, ինչպէս և այժմ, երգվում էր միաձայն. քառաձայնի մասին գաղափար անգամ չունէր ժողովուրդը. միայն միաձայն երգելիս, երգչին օգնում էին՝ երգելու ժամանակ, միապաղ «ձայն-պահելով» և դա էր ամբողջ ներդաշնակութիւնը։

Դէորգ դ. կաթուղիկոսը փոքր արաւ հոգևոր երգերը նաև քառաձայնի վերածել, բայց դա նրան չ'յաջողուեց։ Այնուամենայնիւ նրա արած ծառայութիւնը մեծ էր, քանի որ մեր եկեղեցական միաձայն երգեցողութիւնը կարգի բերուեց և ազատվելու ուաւելորդաբանութիւններ մոցնելու վտանգից ազատուեց։ Քառաձայն մոցնելու համար այնքան կարճ միջոցը բաւական չէր, նախ՝ հիմնաւորապէս քառաձայնի հիմքերը ուսումնասիրելու համար և երկրորդ՝ պէտք էր աւելի մեծ պատրաստականութիւն, քառաձայն երգեցողութիւնը ըմբռնելու և տարածելու համար. իսկ այդ պատրաստականութիւնը, բացի իր տոկունն, անխոնջ աշխատանքից և զարմանալի եռանդից, ունէր Կարա-Մուրզան, որը առաջինը հիմք դրեց քառաձայն երգեցողութեան հայերիս մէջ։ Նրա գործը սկզբում հաղիւ նկատելի, բայց հետզհետէ մեծանալով, յաղ-

թելով բազմաթիւ խոչընդոտների, գրաւեց հասարակութեան բոլոր խաւերի ուշադրութիւնը և առաջ գնալով, հայ ժողովրդի բոլոր խաւերին սիրելի դարձաւ։ Տեղ բռնելով հայ գեղարուեստի զարգացման պատմութեան մէջ քառաձայնի գործը, որին նուիրեց Կարա-Մուրզան իր ամբողջ կեանքը, յաւիտեան կապուած կըմնայ ժողովրդի այդ ընտրեալ զաւակի անուան հետ։ Նա ոգևորելով ժողովրդին, կապելով Նրա սիրտը իր կրթիչ, ոգևորող հաներգների հետ, լցրեց Նրա հոգին բերկրութեամբ, լարեց Նրա ջղերը իր ներդաշնակ, գեղեցիկ, ժողովրդական քառաձայն եղանակներով։

II.

Քրիստափոր Կարա-Մուրզայի ծագումը, նրա սէրը գէպի երաժշտութիւնը. երաժշտութեան տիրելուն նպաստող անձերը և նրա կրթութիւնը. Կարա-Մուրզան իբրև գեղարուեստասէր. երաժշտական կրթութիւնը. Թատրոնական ներկայացումներ և խմբերգեր.

Քրիստափոր Մարգարեան Կարա-Մուրզան բնիկ Ղրիմցի էր, ազգով հայ, դաւանութիւնով կաթոլիկ։ Մնուել է 1854 թուին Ղրիմի Ղարա-սու-Բազար քաղաքում։ Նա պատկանում էր ոչ այնքան ունևոր ընտանիքի. նրա հայրը պարապում էր վաճառականութիւնով. մի ժամանակ պահում էր նաև հիւրանոց։ Նա թէև շատ եռանդուն, գործունեայ և ուսումնասէր մարդ էր, բայց կեանքում այնքան յաջողութիւն չ'գտնելով, չըկարողացաւ իր որդկերանց, որոնց թըւումն և Քրիստափորին, տալ ժամանակակից՝ կանոնաւոր ուսում, քանի որ այն ժամանակուայ Ղրիմի Սիմֆերոպոլի գիմնազիան մատչելի էր հարուստների որդիներին։ Նա զբաղվում էր նաև հնագիտութեամբ և մինչև անգամ, Մոսկուայի հնագիտական ընկերութիւնը ընտրել էր նրան իբրև ընկերութեան մշտական թղթակից անդամ։ Լինելով ուսումնասէր և գեղարուեստասէր, նրա տունը թատրոնական տուն է եղել. երգեցողութիւնը, նուագածութիւնը և ներկայացումները անպակաս են եղել, և նրա տունը լէքն է եղել միշտ գեղարուեստի սիրողներով։ Սկսած

1840 թ., Դրիմի այդ փոքրիկ քաղաքում, շնորհիւ այն ժամանակուայ Դրիմում եղած Մխիթարեանների, տրվում էր զանազան ներկայացումներ։ Այդ ներկայացումներին միշտ մասնակցում էր Քրիստափորի հայրը և միշտ խաղում էր դրամատիքական դերեր։ Ներկայացնում էին գլխաւորապէս պատմական տարողեղեաներ և դրամաներ՝ Մխիթարեանների թարգմանութեամբ։ Դեռ մանուկ հասակում Քրիստափոր Կարա-Մուրզան ցոյց էր տալիս առանձին սէր դէպի երգեցողութիւնը և երաժշտութիւնը։ Մանկութիւնը նա անց է կացնում ծնողների մօտ Շնորհիւ կաթոլիկների եկեղեցու մօտիկութեան, որի բակում ապրում էին Մխիթարեան քահանաները, յաճախ այցելում էր նա եկեղեցի և երկար լսում հոգևոր ներդաշնակ երգեցողութիւնը։

Նոցա տան բակում ապրում էին նաև նրանց ազգական Խանբէկեանները. այդ ընտանիքի հայրը և թէ որդիքը ծառայում էին եկեղեցուն՝ դպրութիւն անելով. Խանբէկեանների տունը մի երաժշտական տուն էր, որտեղ երգեցողութիւնը և երաժշտութիւնը անպակաս էր լինում։ Խանբէկեանցի մեծ որդին Կարապետը, որը երաժշտական ուսումը ստացել էր Բերդիչևի երաժշտական դպրոցում, կազմել էր մի խումբ կաթոլիկաց ս. Գրիգոր եկեղեցում երգելու համար։

Խանբէկեանները ունէին դաշնամուր. ինքը ծերունին ածում էր բալալայկի վրայ և միշտ երգում էին ազգային երգեր։ Ամեռուայ երկար գիշերները և առհասարակ գրեթէ միշտ, հաւաքվում էին նոցա մօտ քահանաները, երիտասարդները, Խանբէկեանի որդու ընկերները և կազմելով խմբեր, երգում ու

զուարճանում էին նուագելով։ Բոլոր այդ ցանկալի զուարճութիւններին մանուկ Կարա-Մուրզան ներկայ էր լինում և ունենալով առանձին ճգտում դէպի երաժշտութիւնը, հրճվում էր և բանի գնում վառվում էր նրա մէջ երգի, երաժշտութեան սիրոյ բոցը և հանգիստ չէր տալիս նրան։ Բացի Խանբէկեանները-ից նրա վրայ մեծ ազդեցութիւն է ունեցել գեղարուեստասէր Նալբանդեանցի ընտանիքը, որի մօտ յաճախ տեղի էր ունենում նուագածութիւններ։

Այդ ժամանակներում Ղարաս-սու-Բազարում առաջնորդ էր հ. Վրթանէս Պատրեանցը, այդ եռանդուն անձնաւորութիւնը, որ ամենքին սիրելի էր դարձած։ Նրա ջանքերով հիմնվում է չորեքդասեան ծխական դպրոց, որտեղ սովորում էին 100-ից աւելի մանուկներ։ Նա իր հիմնած դպրոցի դահլիճում, տեղացիների համար, սարքում էր ներկայացումներ, ինքը անձամբ մասնակցում էր ներկայացումներին՝ կատարելով յուշարարի, կարդադրիչի պաշտօնները։

Հայր Վրթանէսի մտերիմ օգնականներն էին Խանբէկեանները ու Նալբանդեանները և այդ ներկայացումներն ու երաժշտական երեկոյթները լինում էին միասին, բոլորի միացեալ այժերով։ Այդ ներկայացումներին մասնակցում էին տեղական ամբողջ երիտասարդութիւնը, աշակերտները և համարեա ամբողջ քաղաքը օգտվորված էր այդ գործով։ Բնական էր, որ Կարա-Մուրզան չէր կարող յետ մնալ գեղարուեստից, որին նա այնքան սիրում էր։ Նա ներկայ էր լինում թէ խմբական երգեցողութիւններին և թէ երաժշտական նուագածութիւններին։ Մեծանալով այդպիսի մի շրջանում, որտեղ գեղարուեստը և գործը ձեռք

Ա 20212
6760

ձեռքի տուած նոցա միակ անմեղ զուարճութիւնն էր կազմում, որտեղ միևնոյն մարդիկ թէ թատրոնում, թէ եկեղեցում, թէ սեռերում խմբեր էին կազմում երգերի համար և էստետիկական բաւականութիւն պատճառում թէ ուրիշներին, թէ իրանց, և որ տեղը բեմն ու երգեցողութիւնը նոցա միակ զուարճութիւնն էր, այս բոլորը չէր կարող իր ազդեցութիւնը չունենալ մանուկ Կարա-Մուրզայի վրայ, որը ունենալով բնական երաժշտական տաղանդ՝ դեռ մանկութիւնից ուներ սեր դէպի գեղարուեստը — երաժշտութիւնը։ Նրա երաժշտութիւնը սիրելուն աւելի նպաստեց, մանուկ հասակից, նրա մայրը, որը ունենալով գուրեկան ձայն, իր քաղցր երգերով փայփայում և զարգացնում էր մանուկ Կարա-Մուրզայի լսողութիւնը դեռ օրօրոցում, երբ նրան քնեցնում էր իր մեղմ օրօրներով։ Նրա մայրը ածում էր նաև կիթառի վրայ, որի նուագը շատ գուր էր գալիս Կարա-Մուրզային։ Երբ նրա մայրը երգում կամ նուագում էր, Կարա-Մուրզան ինչ գործի մէջ էլ որ լինէր, թէ տանը մէջ, թէ գուրբաղ, մօտիկ ընկերների հետ խաղալիս, թողնում էր ամէն ինչ, խնդրում էր ամենքին լռել, իսկ ինքը ամբողջովին լսողութիւն դարձած, զմայլուած, շնչարգել հրճվում էր մօր քաղցր եղանակներով։ Դեռ չորս տարեկան հասակում, երբ նոցա մօտ հիւր է գալիս այն ժամանակուայ, Ղրիմում յայտնի, հայ երաժիշտներից մէկը, նա երկար ժամանակ բարուած լսում է եղել նրա նուագը։ Երբ նա լսում էր Խանբեկեանների դաշնամուրի ձայնը, փաղում և կանգնում էր նոցա տան մօտ և հոգեզմայլ լսում էր մինչ-

չև այն ժամանակ, երբ օդի մէջ կորչում էին դաշնամուրի ձայնի վերջին հնչիւնները։

Սկզբնական ուսումը նա ստանում է Ղարաասու-Բազարում հայր Պատրեանցի բացած դպրոցում։ Այնտեղ մասնաւոր կերպով նա սովորում է երաժշտութիւն և աւելի յառաջադիմութիւն է ցոյց տալիս երաժշտութեան, քան ուսման մէջ։ Ութը տարեկան հասակից նա սկսում է դաշնակի դասեր առնել, տասը տարեկան հասակում արդէն կարողանում է եղել երգեր ձայնադրել, վարժ ձայնանիշները կարդալ և նուագել դաշնամուրի վրայ։ Տասներորդ տարեկան հասակում աւարտում է նա ծխական դպրոցի ուսման ընթացքը, որ համապատասխան էր չորսդասեան քաղաքային դպրոցի դասընթացքին. իսկ աւարտելուց յետոյ, երկու տարի, մի քանի ընկերների հետ, իր միջնակարգ դատարակութեան վերաբերեալ առարկաները, առանձին ուսանում է հայր Պեսիլեանի մօտ։

Տասներկու տարեկան հասակում սաստիկ սկսում են ցաւել նրա աչքերը այնպէս, որ ենթարկում են նրան բժշկական անդամահատութեան (операція)։ Այդ հասակից նրան դասեր են տալիս տան մէջ և ուսման պակասը լրացնում են զանազան ուսուցիչներ և վարժուհիներ։ Կարա-Մուրզան նոցա մօտ սովորում է ֆրանսերէն, գերմաներէն, իտալերէն լեզուներ և այլ առարկաներ։ Բացի դոցանից դաշնամուրի և երաժշտութեան դասերը զուգընթացաբար, մօտ երկու տարի, շարունակում է երաժիշտ Ստեփան Մուրզայեանի մօտ։ Կարա-Մուրզայի հայրը, պատրաստել տալով նրան, առանձին ցանկութիւն ունէր Կարա-

Մուրզային նուիրել հոգևոր կոչման, ուստի ցանկանում է նրան ուղարկել Իտալիա ս. Ղազարի վանքը. բայց որովհետև Կարա-Մուրզային չէր գրավում հոգևոր կոչումը, ուստի հոր բոլոր ջանքերը ապարդիւն են անցնում։ Այն ժամանակ հայրը վճռում է նրան մտցնել իր առևտրական գործերի մէջ. դրա համար նրան ուղարկում է Օդեսա հաշուապահութիւն սովորելու։ Օդեսայից վերադառնալով, նա ստիպուած է լինում զբաղուել հոր հաշիւներով։ Սկսում է վարել հոր գործերը, պահում է նրա հաշիւները, բայց գրաւուած լինելով երաժշտութիւնով, նա անընդունակ էր վաճառականութիւնով զբաղուելու և մինչև անգամ մեծ վնասների պատճառ է լինում՝ հաշուապահութեան մէջ անփոյթ լինելու պատճառով. քանի որ նրան զբաղեցնողը ոչ թէ հաշիւներն էին, որ նա կատարում էր մեքենաբար, այլ երգեցողութիւնը և երաժշտութիւնը որոնցով նա յափշտակուած էր։

Հաշուապահութեան առօրեայ գրքերի հետ նա անբաժան ունէր նաև իր երաժշտութեան տետրակները, որոնցով աւելի էր զբաղվում, քան հաշուապահական գրքերով։ Մի անգամ, երբ նա ըստ սովորականին հաշուապահական գրքերը մի կողմը պահած, պարապում է իր նոտաներով, վրայ է հասնում հայրը, խլում է նրանից նոտաների տետրակները և բարկանալով ասում է նրան, որ «քեզանից երբէք մարդ չի դուրս գայ։ Նատ բնական էր, որ նա չէր կարողանում անել այն, ինչ որ ուզում էին նրան անել տալ և ինչ որ նրան հոգով և սրտով ասելի էր. սիրելով երաժշտութիւնը, զբաղուելով նրանով, նա ամբողջովին նուիրուել էր միայն նրան։

Կարա-Մուրզային յաջողվում է դաշնամուրի կանոնաւոր դասեր առնել, հիմնաւորապէս ուսումնասիրել և սովորել երաժշտութեան տեսութիւնը. նա յօրինում և ձայնագրում է իրանից երգեր, սովորում է ինքն իրան ածել ֆլէյտի վրայ, մասնակցում է խմբական օրկեստրների և ապա, երբ բաւական հմտանում է երաժշտութեան, ինքը գլուխ անցնելով գործին, հաւաքելով իր շուրջ իր հասակակից երիտասարդ սիրողներին, կազմում է խմբեր, սարքում է իր հօր տան մէջ համերգներ, որոնց համար յատկացրած է եղել, յատուկ, տան մեծ դահլիճը. այնուհետև բոլորը խմբուելով նրա շուրջը, թէ խմբական երգեցողութիւնները, թէ ներկայացումները կատարվում էին իրանց տան դահլիճում և առհասարակ նա սկսում է ծառայել գեղարուեստին։

Լինելով հոգով արտիստ, ինչ գեղարուեստական գործի որ կպչում էր, առաջ էր տանում ֆանատիկոսութեամբ։ Մի ժամանակ, երբ նա 17—18 տարեկան էր, գրաւուել է եկեղեցու զանգակներով. ամեն տան և կիրակի օրերը, վաղ առաւօտեան, նա վազում է դէպի եկեղեցու զանգակատունը և չորս զանգակները ձեռքը առած, այնքան մարժ, գեղեցիկ, ներդաշնակ և գուրեկան է հնչեցնում, զանգան ձևերով, որ բոլորը զմայլուելով զանգակների ներդաշնակ ձայնից, արդէն ճանաչում էին, որ հնչեցնողը Կարա-Մուրզան է։

Մի ուրիշ անգամ, երբ ցանկացել են խաղալ Արշակ II. պատմական պիեսան, նա վերցրել է իր դերը (Արշակ II.) և գնացել քաղաքից դուրս մի բլրի վրայ փորձուելու։ Դերը սովորելիս այնքան տարվում է իր դերով, որ սկսում է խաղալ շարժումներով, կարծէք

բեմի վրայ լիներ։ Նրա այդ տարօրինակ ձևերից և ձայնից հեռաքրքրուած, բլրի մօտի վրանարնակ՝ թագաւորի բոյսերը տեսնելով նրան, մօտենում են և ապշած դիտում։ Թէ արդեօք ինչ է անում այդ մեծակ մարդը, քաղաքից դուրս, բլրի վրայ, ինչն իրան խօսելով և երբ հասնում է դերի այն տեղը, որտեղ պէտք էր ձեւացնել Արշակ II-ի խեղդաւորութեան տեսարանը, նա այնքան բնական է կատարում, մոռացած իր շրջակայ դիտողներին, որ բոյսերը վախեցած նրա շարժումներից՝ փախչում են նրանից, կարծելով թէ այդ մարդը կամ խեղդաւորւած է կամ թէ սատանաներով բռնուած։ Այսպէս, ամէն բանի մէջ, նա չդիտէր միջակ ճանապարհ բռնել, նա ֆանատիկոս էր իր գործունէութեան մէջ։

1874 թուին, լրանում է նրա 21 տարին և նա հրաւիրւում է զինուորագրութեան. թէև վիճակը ընկնում է, բայց ունենալով առաջին կարգի արտօնութիւն՝ ազատւում է զինուորագրութիւնից։ Այնուհետև, նա հաստատ մտադրւում է նուիրուել երաժշտութեան և ցանկանում է գնալ Պետերբուրգ, կոնսերվատորիայում երաժշտական ուսումը շարունակելու. բայց այդ նրան չէ յաջողւում մի քանի հանգամանքների պատճառով, որոնցից մէկն էր նրա աչքերի հիւանդութիւնը։ Նեսրին իր եռանդուն և տոկուն աշխատանքի, նրան յաջողւում է մտնելու ուսուցիչների մտ անցնել գաշնամուրի ամբողջ կուրս, սոլֆէջիոն և երաժշտութեան թէորիան՝ Հենդելի, Նէիպի, Լաբէի, Բրասաէի և Գոտոի մեթոդներով։ Երաժշտութիւնը իր մանագիտութիւնը ընտրելով, իբրև ուսուցիչ, մանկավարժական արուեստն ևս մշակելով իր

մէջ, սկսում է նաև մասնաւոր դասեր տալ։ Բէրն էլ դասեր առնելով մի քանի տարի լաւ ուսուցիչներից, արդէն կարողանում է ինքնաբերաբար մշակել երգեր և կազմել խմբեր։ Իր յատուկ ուսումնասիրութեան առարկայ է մերցնում հայկական ազգային երգերը, որոնց սկսում է ժողովել և երաժշտական արուեստի պահանջների համեմատ կանոնաւորել և ձայնագրել։ Երաժշտական դասերի հետ, նա իր ուսումը լրացնելու համար, 1881 թ. պատրաստվում է գնալ Թէոդոսիա՝ ուսուցչական ինստիտուտը մտնելու համար։ Բայց պատրաստուելուց նա ստիպուած էր պարապել մասնաւոր դասերով, իր հօր ընտանիքին օգնելու, որ այդ ժամանակներում դանդում էր նիւթական նեղ դրութեան մէջ։

1881 թ., ապրիլի 3-ին, Սեւաստոպոլում գտնուած եղբօրը, Դարաւսու-Բազարից, իր ուղարկած հետեւեալ նամակը արդէն բնութագրում է նրա այն ժամանակուայ դրութիւնը։

«Նուռով գնալու եմ Թէոդոսիա ուսուցչական ինստիտուտ մտնելու հարցի վերաբերմամբ. այնտեղից Եալտա, երրորդ օրը կրվերադառնամ, պարերի դասերին հասնելու, որտեղ ես ածում եմ և ստանում 20 ռուբլի։ Իմ եկամուտը հասնում է 85 ռուբլու ամիսը։ Ծախսում եմ դասերի համար 12 ռուբլի, ծխելու 3 ռուբլի, ընդամենը 15 ռուբլի. իսկ մնացածը ծախսում եմ 'ի հարկէ ընտանիքի կարիքների վրայ։ Հէնց ցաւալին նրանումն է, որ այդ տեսակ եկամուտով չեմ կարող, հշտապահ կերպով, քեզ փող ուղարկել. միայն այս ամիսն է, միւս ամսին կարիք չենք զգայ։ Բայց ինչ է փողը, ես նրան այնքան չեմ սիրում, համարեա ատում եմ։ Ամեն օր 9 ժամ գնում եմ աշխատանքի, 3 ժամ ածում եմ և կէս գիշերից յետոյ, գալիս եմ տուն, պատրաստում դասերս մօտ 4 ժամ. դուրս է գալիս օրական 16 ժամ զբաղմունք. չնայելով դրան, ես ինձ զգում եմ

առաջուանից առողջ, առարկաները ինձ յաջողվում են, ես այժմ լաւ գիտեմ երկրայափութիւնը և չարունակում եմ նոյնպէս թատրանութիւնը. աշխարհագրութիւնից և ռուսաց լեզուից պատրաստ եմ. պէտք է պատմութիւն և պաւօնական լեզուն, բայց դրա էլ ոչինչ. հնարաւոր կը պատրաստեմ. Թէօդոսիայում թէև մշտական քննութիւններ են, բայց ես չեմ վախենում, եթէ քննութիւն չը բռնեմ, կընթանամ Պետերբուրգ»

Ուսման ծարաւով տոգորուած, մեծ չարչարանքներից յետոյ, նա ուղևորվում է դէպի Թէօդոսիա և ուրիշ աշակերտների հետ բռնում է մշտական քննութիւն, ինստիտուտ մտնելու համար. բայց դժբախտաբար, նրան չէ յաջողվում; ինչպէս և իր հետ 14 հոգու, մտնել այդ դպրոցը՝ պաւօնական լեզուին հմուտ չըլինելու պատճառով. ուստի կրկին վերադառնում է Հայրենիք և մի տարի դարձեալ պատրաստվում է իր մտադրութիւնը իրագործելու նպատակով։

Հայրենիքում դարձեալ նա չարունակում է պարապել դասերով, նուագում է դաշնամուրի, ֆլէյտի վրայ, գրում է նոր երգեր, պարերգեր և քայլերգեր (марш). բացի դրանցից կազմում է մի թատերասիրական խումբ, հաւաքում է սիրողներ, ներկայացումներ տալու համար և ամբողջապէս նուիրվում է այդ գործին. նոյն թուի Նոյեմբերի 3-ին ուղևորուած իր նոր գործով գրում է իր եղբօրը.

«Ես թատերական գործերով սաստիկ զբաղուած եմ. մեծ պարտականութիւններ առել եմ վրաս։ Շինան (բեմը) պիտի ըլլայ մեր դալը, ամենափառաւոր կերպով։ Ընկերութեան անդամներ գրուեցան 15 և դերասան (սիրող) 25-էն աւելի։ Հրաշալի խաղեր պիտի ներկայացնենք, 16 կամ 20 անգամ, յօդուտ աղքատաց տեղւոյս հիւանդանոցի։ Վաղը Ռման աղաս *) Քէ-

*) Հռոթիսեանը Նալբանդեանի հայրը, որը լինելով սիրող, մեծ հաճութիւնամբ մասնակցում էր տեղական ներկայացումներին և երբեմն գրում էր լատակ տեղական բեմի համար փոքրիկ պիեսներ։

ֆէէն կ'ելլէ և Սեաստափօլ 'ի հարկէ կըտեսնաք. ասա իրեն, որ քանի մը ողբերգութիւն, կատակերգութիւն և մէկ տեսիլով ոտնիլ թող պատրաստէ և մէկ հատ ալ խաղ վեց աղջկով, բայց պարկէշտ և ընտիր, որ մեր աղջիկները չ'ամչնան խաղալու. մանչ (տղամարդ) երկու կամ երեք հատ թող ըլլայ»։

Նոյն ամսի 16-ին նա դարձեալ գրում է իր եղբօրը.

«Շինան (բեմը) 5 օրէն կըլմննայ. կը խաղանք դեկտեմբերի մէկին, առաջին ներկայացման խաղերս է՝ Ա.ըչակ երկրորդ Խ. Վ. Գալֆայեանի, Յովսէփ գեղեցիկ, Կրպօ, ծլատ—կատակերգութիւն 3 արարուածով, Ալաֆրանկայ—Գալֆայեանի և Վարժապետ. վեց խաղ հիմա պատրաստ է, յետոյ ուրիշ ալ կը պատրաստենք»։

Այս նամակները գեղեցիկ կերպով բնորոշում են, թէ ինչ ասոյենան Կարա-Մուրզան սիրում էր գործը և ինչ հայեացք ունէր թատրոնական գործի վրայ՝ գաւառական քաղաքի համար. նա համոզուած լինելով, որ թատրոնը մի ուսումնարան է, որտեղ բարքերը պէտք է կրթուեն, իր նամակի մէջ չեշտում է եղբօրը, որ ներկայացնելու համար պատրաստելու պիեսները լինին պարկէշտ, որ «մեր աղջիկները չ'ամչնան խաղալիս»։ Սիրողների խմբով նա, ներկայացումների հետ, բեմից ժողովրդին մեծ էստետիկական բաւականութիւն է տալիս իր քառաձայն հայ խմբերգներով, որ նոր էր, ոչ թէ Ղարաբաղ-Բազարի, այլ ամբողջ հայ ժողովրդի համար։

III.

Կարա-Մուրզայի գործունէութեան ծարաւը. նրա տրամադրութիւնը հայրենիքից հեռանալուց առաջ. ուղղութիւնը դէպի Կովկաս 1882 թ. անն. Նպաստ կարիքներ քառասնեակը տարածելու վերաբերմամբ։ Թիֆլիզի բանիմաց մարդկանց խրախուսանքը և ընդունելութիւնը։ Երկու տարի Թիֆլիզում։ Առաջին երեք համերգները Թիֆլիզում. հասարակութեան վերաբերմունքը նրա համերգներին։

Հայրենի քաղաքը, Կարա-Մուրզայի ընտրած գործունէութեան ասպարէզի համար, շատ փոքր էր, քանի որ հայերի թիւը այնտեղ այնքան էլ մեծ չէր։ Գործունէութեան ծարաւը նրան ձգում էր այնտեղ, որտեղ աւելի մեծ կարիք կար և որտեղ նրան վիճակուած էր գործել մինչև իր վերջին րոպէները։ Բայց նախ քան իր հայրենիքը, իր սիրելի գործը և շրջանը թողնելը, նրա մէջ տատանվում էր այն միտքը, թէ արդեօք իր հայրենիքից—որտեղ նրան ամենը գիտէին, որտեղ նրա գործը նոր ոտի էր կանգնել—հեռանալով, կրկարողանա՞յ օտար երկրում; հայ շրջաններում, առաջ տանել իր գործը և արդեօք ի՞նչ եղք կունենայ նրա մտադրութիւնը։ Կարա-Մուրզայի այդ տրամադրութեան թարգման է հանդիսանում նրա ձեռքով 1882 թ. գրած հետևեալ ոտանաւորը, «Մնձ ի՞նչ է սպասում» վերնագրով՝ որ ամբողջապէս ընդգծում է նրա այն ժամանակուայ հոգու տրամադրութիւնը։

«Ինձ ի՞նչ է սպասում, ինչպէս լեռներով
Կանցնեմ իմ ուղին, միշտ ընթանալով.
Արդեօք չե՞մ հանիլ անանց ժայռերի
Եւ զուր զոհ դառնալ անյայտ յոյսերի՞»։
Դուցէ չ'բացուած ծաղիկը կեանքիս
Դեռ վաղ թոռոմի խեղդող փշերից,
Եւ նրա հետքերն մշտամաշ քամին
Ցրի ու չաղ տայ երկրի երեսին։
Կատաղած ծովում, փչացած կեանքի,
Թէ սուր ճանկերում՝ մաշող զրկանքի
Ես պիտի փչեմ իմ շունչը վերջին
Միայն անօգուտ, անյայտ ամենքին...
Դեռ անմեղ մանուկ շատ քիչ ինդացի,
Ես մօրս գրկում շատ վաղ զգացի
Ցուսահատութիւն իմ մատաղ սրտում,
Եւ կեանքն այն օրից ինձ քիչ է ժպտում։
Ինձ ի՞նչ է սպասում, ո՞րտեղ կանգ կառնի
Նաւս տարագիր զոհ կերթայ ծովին,
Թէ իմ յիշատակս էլ, կրգայ ժամանակ,
Որ շատ սրտերում կ'տայ արձագանք...

Այսպիսի տրամադրութեան ազդեցութեան տակ, 1882 թ. սեպտեմբերի 18-ին, Դրիմի Ղարասու-Բազար քաղաքից, նա ճանապարհ է ընկնում դէպի Կովկաս, հաստատ համոզմունքով, հայերի մէջ քառաձայն երգեցողութիւնը տարածելու նպատակով։ Այդ միտքը նրա մէջ յղացել էր դեռ մի քանի տարի առաջ, ինչպէս ինքը յիշում է իր մի փոքր յիշատակարանում, բայց ոչ աք չէր կարծում, որ նա կուզեսորուի Կովկասաւելի շուտ խորհուրդ էին տալիս, այդպիսի մի ընդարձակ և դժուարին գործի համար, գնալ Կ. Պոլիս,

որտեղ կարող էին օգնել իր ազգականները, ծանօթները և վերջապէս Կ. Պոլիսը աւելի մօտ էր Դրիմին, քան Թիֆլիզը՝ որտեղ ուզում էր նա սկսել իր գործունէութիւնը, մանաւանդ, որ Բաթումի երկաթուղին դեռ չէր վերջացած։ Բայց նա մնաց էր և պէտք է կատարէր. հակառակ իր բարեկամների ցանկութեան, նա ուղևորվում է դէպի Կովկաս։ Դեռ ճանապարհին խեղճն ու միտքը իր գործին նուիրած լինելով, քննում է իր ուղեկիցներին, թէ արդեօք նրանցից ո՞րն է երգ սիրող։ «Բոլոր ճանապարհին, գրում է նա, հետաքրքրում էին ինձ նոր մարդիկ, նոր տիպեր իրանց խօսակցութիւններով, տարօրինակ վարմունքով, արագ արագ շարժումներով»։ Միշտ զբաղուած է լինում գնելով նրանց և աշխատում է գուշակել, արդեօք այդ նոր մարդիկ լաւ երգողներ կլինեն։ «Շատ տեղ և շատ անգամ, այդ ինձ համար բոլորովին նոր մարդիկը այնքան կոպիտ, անզգայ և տարօրինակ էին թւում, որ ես գրեթէ վհատութեան մէջ էի ընկնում, մտածելով, որ այդ ժողովրդից ինչ ընտրութիւն կարող է լինել, երգեցողութեան համար և ինչ նեղութիւններով։ Պատահում էի և ինտելիգենտ մարդկանց, հարցնում էի կարծիքներ. դեռ ճանապարհին, Աւխատում քաղաքում, հօրեղբօրս մօտ մի քանի օր հիւր մնալիս, իմ և մի քանի ինտելիգենտ անձանց մէջ տարաձայնութիւն էր պատահել. խմնալով իմ նպատակը, ուզղակի ասում էին ինձ, որ դա անիրագործելի է, ցաւում էին ինձ վրայ և առաջարկում՝ մնալ Աւխատմում, գինեսրական երաժշտական խմբի կառավարչի պաշտօնով»։ Կարա-Մարզան, ունենալով իր որոշ նպատակը և ծրագիրը, ի հարկէ չի լսում իր

բարեկամներին և ուղղակի Սուխումից անցնում է փոքրիկ Այսաեղ, ճանապարհին, խօսք բանալով մի զարգացած հայ ճանապարհորդի հետ, վէճի է բռնվում, քառաձայն երգեցողութեան տարածելու հնարաւորութեան մասին և այն ատոհման զայրանում է, ասելով նրա կարծիքը — «մեկ անհնար է Կովկասում մարդկանց հաւաքել և խմբական քառաձայն երգեր տարածել» — որ լաւ է համարում ընդհատել խօսակցութիւնը, իրան չըհասկացող մարդու հետ և բաժանուել միանգամից։

Երկաթուղու կայարանում, մի քանի վաճառականներ մնում են նրան և հարցնում թէ ո՞ւր է գնում և ինչու համար. նա մոռանալով անցած փորձերը, դարձեալ պատմում է իր նպատակը և դարձեալ ենթարկվում է ծաղրի...

Վագոնում ծանոթանում է մի երիտասարդ ձայնագրագէտ հայ քահանայի հետ. «նրա կարծիքը, գրում է նա, առաջինների նման, իմ կարծիքին հակառակ էր. մանաւանդ եկեղեցական երգերի մասին, որ քառաձայնը անկարելի էր համարում և կրօնական տեսակէտից սրբապղծութիւն ու հայկական ձայնանիշները եւրոպականից նա բարձր էր դասում։ Տէր հոր բացատրութեամբ իմ նպատակը հաղորդման ատոհման ստորանալու և անուշադիր է մնալու»։

Այդ արդէն անկարելի էր Կարա-Մուրզայի համար, առաջի պատահած ձայնագրագէտի հետ, ձայնագրութեան մասին խօսելիս, կռվում է և իրան վերհիշում, որ ինքնրատնիկութեան այդ բոլորը պատահական կարծիքներ են։ «Մի քանի բուրժուայ quasi արիստոկրատներ, մի քանի ինտելիգենտ անձինք, որ-

դէն բոլորովին հեռացած ուսանողական կեանքից, կարող են չմնանալ և դառել ինչպէս վաճառական-ներ»։ Բայց այս և սրա նման դէպքերը, նրա վրայ վատ են ազդում և նա ինքն իրան հարց է տալիս— «մթիթ հայերը հալածելու են քառաձայնը, մթիթ չպիտի ճանաչեն, որ նա գեղեցիկ է...» Նրան փրկում է յուսահատութիւնից իր տոկունութիւնը։ «Չէի կարծում, գրում է նա, որ հայկական երգերի քառաձայն տարածելու գործի մասին, ընդհանուրի կարծիքը այդ տեսակ լինի և կամ հասարակութիւնն էլ տրամադիր լինի այս նոր գործին այդպէս սկեպտիքարար վերաբերուել... ես յոյս դրած էի կոմպիտենտ անհատների վրայ...»։ Եւ այդ «կոմպիտենտ» մարդիկը իսկապէս նրան ոգևորում են։

Հոկտեմբեր ամսի 5-ին, հանելով Թիֆլիզ, նոյն օրը, նա այցելում է Գրիգոր Արծրունուն, որը ծանոթանալով նրա ծրագրի և գործունէութեան հետ, այնքան ոգևորուած է խօսում՝ այդ գործը իրագործելու հնարաւորութեան մասին, որ Կարա-Մուրզայի մէջ կրկնակի վառում է նրա անչէջ եռանդը։ Ինքը, Կարա-Մուրզան, գրում է, որ «ես բոլորովին փոխուեցայ, իմ իդէան աւելի ևս հաստատուեց իմ մէջ և յոյսերս մեծացան. մի քանի հարց ու փորձ ևս և մեծ խմբագիրը նստեց, մի յայտարարութիւն գրեց իմ գործի մասին, «Մշակում» տպելու համար»։ Եւ յիրաւի, 1882 թ. Մշակի հոկտեմբերի 13-դ համարի, ներքին լուրերի առաջի շարքում զետեղած է հետեւեալ լուրը.

«Երաժշտութեան վարժապետ Խ. Մ. Կարա-Մուրզան դասեր է տալիս պիանօի, սոլֆէջիօի և

երաժշտական թէօրիայի։ Նա ուսուցանում է Ա. Հենդելի մանկավարժութեամբ, տեխնիկայի դասերը տալիս է հետևելով Ա. Նմիդդին, իսկ թէօրիայի մէջ հետևում է Օ. Լաբէին. անցնում է պրակտիկայի լիակատար ընթացքը Բրոսսէի և Իոտի մեդոտով և պատրաստում է աշակերտներին կոնսերվատորիայի համար։ Պարոնը ընդունում է նմանապէս պատուէրներ պարտիտուրների և փոխարկում է պիեսաները պիանոյի և օրկեստրի համար։ Թնդրում է դիմել իրան Բազարնայա փողոց, իշխանուհի Էրիստովայի տունը № 16։ Մենք մեր կողմից աւելորդ չենք համարում աւելացնել, որ պ. Կարա-Մուրզա մի երիտասարդ Ղրիմցի հայ է, որ եկած է Թիֆլիս մի քանի օր սրանից առաջ»։

Կարա-Մուրզան այցելում է նմանապէս Մեղուի խմբագրութեան, որտեղ ծանօթանում է Պետրոս Սիմոնեանցի, Սպանդար Սպանդարեանի, Հայկունու և Մերենցի հետ։ Մեղուի խմբագրութիւնն էլ համակրանքով վերաբերուելով, իր կողմից «Մեղու Հայաստանի» 1882 թ. հոկտեմբերի 29-ի համարի մէջ տպում է հետևեալ լուրը. «Մենք այս օրերս առիթ ունեցանք ծանօթանալու Խրիմցի հայ պ. Խաչատուր Մարգարեան Կարա-Մուրզայի հետ. այդ երիտասարդը քաջ հմուտ լինելով երաժշտութեան, դասեր է տալիս երաժշտական տէօրիայի և պատրաստում է կոնսերվատորիայի համար»։

Այս բոլոր նոր ծանօթները մեծ ոգևորութեամբ ընդունում են հայկական երգերի չորս ձայնի վերածելու և տարածելու գործը և իւրաքանչիւրը տալիս է իր կողմից խորհուրդներ նրա յաջողութեան և յա-

ռամադիմութեան համար։ Նա խմբագրութիւններին յայտնում է իր նպատակը իրագործելու հետևեալ միջոցները. ա) կազմել խմբեր, սովորեցնել երգեր և բեմ դուրս գալ համերգներ տալու, բ) մշակել երգեր և տալ Եւրոպական կամ հայկական նոտաներով և հայերէն բառերով. բացի դրանցից, եկեղեցական արարողութիւնը, սկսած պատարագից, բոլոր ժամերգութիւնը, երգել չորս ձայնով։

Իր այս մտադրութիւնը իրագործելու համար, նա լրագրութեան միջոցով հրաւէր է կարդում հայ երգ սիրողներին, մասնակցելու խմբական երգեցողութիւններին։ Համակրութիւն գտնելով ամենուրեք՝ բանիմաց մարդկանց մօտ, անձամբ և թէ լրագրութեան միջոցով, նա սկսում է արծարծել իր միտքը ամեն տեղ։ Օրէցօր նա սպասում է, որ գոնէ մի քանի երիտասարդներ կգան կը յայտնեն իրանց ցանկութիւնը՝ մասնակցելու խմբական երգեցողութիւններին և ապա նոցա միջոցով կարելի կլինի հրաւիրել ուրիշներին։

Ապրուստի միջոց ունենալու համար մասնաւոր տներում դաշնամուրի վրայ ցերեկները դասեր է տալիս, իսկ երեկոները Արժբունու թատրոնում, հայոց և վրաց ներկայացումների, անտրակտների ժամանակ ածող՝ երաժշտական խմբի կառավարչի դեր է կատարում։ Այստեղ, օգտուելով հանգամանքից, երաժշտական խմբի համար, նա մի քանի հայկական երգեր է ձայնագրում, որոնք ժողովրդի վրայ լաւ տպաւորութիւն են թողնում, իսկ իրան չափազանց ոգևորում։ Այս յաջողութիւնից քաջալերուած, գիշերները նա գրում է նոր հեղինակութիւններ և մշակում է ժողովրդական երգեր։ Այդ ձմեռ նա գրում է մօտ

քառասուն զանազան երգեր, պատարագի արարողութիւնը ամբողջապէս քառաձայն, ապում է մի «Պապուրի հայկական երգերից դաշնակի համար», գրում է մի քանի նոր երգեր՝ դաշնակի և երգելու համար և Խ. վ. Դաշիայեանի Արշակ երկրորդ ողբերգութեան վրայ 33 նուագ՝ իբրև օպերայ երգելու և միասին նուագելու համար։ Ժողովուրդը այս աշխատանքներին մեծ համակրանքով է վերաբերվում; բայց խումբ կազմելու համար ոչ ոք չի գալիս նրա մօտ. թէև արդէն բաւական ժամանակ էր անցել, որ նա յայտարարել էր լրագրներում՝ սիրողներին գործի հրաւիրելով։ Նախկին ոգևորութիւնը չքացել էր, շատերը սկսել էին կասկածել գործի յաջողութեան վրայ և «ինձ հետ խօսողները, գրում է նա, արդէն առանց քաշուելու ասում էին, որ ոչ քառաձայն երգեցողութիւնը և ոչ էլ համերգները կարող են յաջողութիւն ունենալ, իզուր աշխատանք է և այլն»...

Խմբագիրները, Բաֆֆին, Դամառ-Բաթիեան գովում են գործը, խօսում, գրում, քաջալերում են նորան։ Կարա-Մուրզան բոլորովին չ'մհատուելով, միաժամանակ բաւականանում է միայն հարցը արծարծելով և աշխատում է ամէն կերպ, խօսքով թէ գործով, իր միտքը իրագործել։ Այսպէս ուելի քան երկու տարի «պրոպագանդա» անելուց յետոյ, վերջապէս, 1885 թ. Ծննդեան տօներին, կարողանում է կազմել առանձին խումբ՝ քառաձայն խմբական երգեցողութեան համար։

«Կարդալով իմ անվերջ յայտարարութիւնները լրագրներում, գրում է նա, ինձ մօտ եկան Քամոյեան եկեղեցու խմբապետ Միքայել Շահլամեանը իր

եկեղեցական խմբի ութ անդամների հետ և դերասան Վրայրը ու Միրաղեանցը 5—6 ընկերների հետ։ Ընդամէնը հաւաքվում են 15 հոգի։ Ձայները փոխ-ձերուց յետոյ նա բաժանում է նոցա չորս ձայնի։ Հատատաս ձայներ ունենում են «դիսկանտների» մէջ՝ Պապեան, «տենորների» մէջ՝ Վարդիկեան, երկրորդ ձայների մէջ՝ Խոջաէնթաթեանց, երրորդ ձայներից Շահրամեան և չորրորդ ձայներից Էնիկոլոպեան և Ամիրջանեան։ Այս 15 հոգու հետ սկսում է նա եռանդով պարապել և նոյն թուի Մարտի 15-ին, Արժրունու թատրոնում, կայանում է նրա առաջին խմբերգական հանդէսը Թիֆլիզում, չորս բաժանմունքներից բաղկացած, 22 երգերով, հետևեալ ծրագրով։

Ծ ա ռ ա յ ա բ ա ն

1. «Երգ խայտուոյ», Կոմս Էմմանուէլի. . երգում է խումբը։

Մ ա ս Ն Ա.

2. Աղօթք «Տէր Կեցո», Մ. Թաղեաթեանցի. Շահրամեան և խումբը։
3. «Քամբ... արտասուն», Հ. Պ. Ալիշանի . . Խումբը։
4. «Ով լուսին», Գամառ-Քաթիպայի. . . . կարդում է տ. Զարէյ։
5. «Լաց ամպերը»... Գամառ-Քաթիպայի. երգում է խումբը։

Մ ա ս Ն Բ.

1. «Աղօթք Վարդան Մամիկոնեանի»... Ս. Կարինեանցի . . . . . Էնիկոլոպեան և խումբը։
2. «Պիլիկա», Պէշիկթաշլեանի. . . . . Դապիրեան և խումբը։
3. «Աղօթք սասունցու նախաբարաց», Ի. Դարվէշի . . . . . Խումբը։
4. «Հայաստան երկիր դրախտավայր», Միրզա Վանանդ . . . . . Խոջաէնթաթեանց և խումբը։
5. «Այ մանկանացուն», Մ. Պէշիկթաշլեան . Շահրամեան և խումբը։

Մարտ Գ.

1. „Վանեցոց խրախոյս“, Մ. Մնակեանի. . Վրոյր և Խումբը։
2. „Թող փչէ քամին“, Դամառ-Թաթիպալի. Խումբը։
3. Երգ օրօրոցի „Արի իմ սոխակ“, Դամառ-Թաթիպալի . . . . . տիկ. Զարէլ։
4. „Հիանդ պատանի Զէյթունցի“, Մ. Գէշիկ-Թաշլեանի . . . . . Վրոյր և Խումբը։
5. „Զու (մարշ) զէյթունցոց“ . . . . . Խումբը։

Մարտ Դ.

1. „Վատ ժամանակ“ փոխ. Արամ Միսակէ. Վրոյր և Միրզեան։
2. „Մարտ“, Բաֆիի . . . . . Խաչատեանթեանց։
3. „Թաղաքացի և հովուէր“, Աճէմեանի . . տիկ. Զարէլ և Վրոյր։
4. „Աղգասէր“, Արամ Միսակէի . . . . . կատարում է Միրզեան։
5. „Ժամանակիս պահանջը“, Միսակէի. . . տիկ. Զարէլ։
6. „Պար Նատասեանց“, Ոչտոնու . . . . . Վրոյր և Խումբը։

Թատրոնը կիսով չափ լիքն է լինում։ Ամենքը անհամբեր սպասում են վարագոյրի բարձրանալուն։ Վարագոյրի եռեից յանկարծ լսվում է «Մեր հայրենիք թշուառ անտէր...» մեղմ, քառաձայն երգեցողութիւնը։ Վարագոյրը բարձրանում է կամաց կամաց և հասարակութեան առաջ պատկերանում է բեմի վրայ մի փաքրիկ խումբ պատմական հայկական հագուստներով. տպաւորութիւնը մեծ է լինում։ Հասարակութիւնը հաւանում է նրա երգերին և մի քանիսը կրկնել է տալիս։ Հանդիսականներից շատերը չսպասում են բեմի յետեը՝ իրանց առանձին շնորհակալութիւնը յայտնելու։ Կարա-Մուրզային։ Մինչև անգամ այցելուներից մէկը՝ գնդապետ Մելիք-Ազարեան, խմբին ընծայում է 25 ռուբլի։ Ներկայացումը վերջանում է։ Հանդիսականները բացականչութիւններով թնդացնում են թատրոնը։ Դուրսը Կարա-Մուրզային դիմաւորում է երիտասարդների մի խումբ և օվացիաներ-

ռով ճանապարհ է գնում։ Հասարակութիւնը, ցրուելով անները, ճանապարհին արդէն փարձում է երգել այն երգերը, որոնք աւելի դուր էին եկել և աւելի հեշտ էին։ Այդ օրը Կարա-Մուրզայի կեանքի ամենաուրախ օրերից մէկն էր։

Թիֆլիզի հայերի համար այդ համերգը մի նորութիւն էր և այդ նորութիւնը բնական էր, որ պէտք է գրաւէր հայերին՝ լսելու մայրենի երգերը, այն երգերը, որոնց համարեա կորստեան դերեզմանից հանել և ներդաշնակել էր այնքան խնամքով տաղանդաւոր երաժիշտը և տուել նրան մի նոր, գեղեցիկ և դուրեկան բնաւորութիւն՝ ոչ զուրկ երաժշտական բաղդրութիւնից. որը յուսադրում էր, թէ հայերը մի ժամանակ կարող են ունենալ իրանց կանոնաւոր երգեցողութիւնը։ Բայց ինչպէս արտայայտեց հայ հասարակութիւնը իր սէրը դէպի այդ նորութիւնը, դէպի այդ գեղեցիկը և լաւը։ Հայ լրագրութիւնը գովեստով խօսեց այդ նորութեան մասին, հրաւիրեց հայ հասարակութեան ուշադրութիւնը և քաջալերութիւնը այդ գործի վրայ։ Թէև հայ հասարակութիւնը իր փարթամաստութիւնով էր պատուել նրա առաջին համերգը, այնուամենայնիւ Կարա-Մուրզան ոգևորուած այդ փարթամաստութեան ցոյցերով, ուժեղացնելով իր խումբը մի քանի նոր ուժերով, սովորեցնելով նոր երգեր, նոյն թուի ապրիլի 1-ին, նոյն թատրոնում, 20 հոգուց բաղկացած խմբով, հանդէս դրեց մի նոր համերգ։ Նախկին խմբերգի մասին գրած լրագրական գովասանքներից, ներկայ եղողների այդ տեսակ լաւ ընդունելուց և վերջապէս հասարակութեան մէջ նպաստաւոր լուրեր տարածուելուց յե-

ասոյ, կարծվում էր, որ հասարակութիւնը աւելի մեծ թիւով կը յաճախի այս անգամ, բայց, դժբախտաբար, աւելի քիչ էր ազգային երգեր լսել ցանկացողների թիւը։ Հասարակութեան այս տեսակ սառը վերաբերուելը կարծես պէտք էր թուլացնէր Կարա-Մուրզայի եռանդը, բայց ոչ. նա իր անընկճելի եռանդով շարունակում է գործը։ Հեղինակելով մի նոր համերգի համար «Հրդեհ», «գաղթականներ» և «Հովուհի» նոր խմբերգերը և պատրաստելով խումբը, յունիսի 15-ին, նկարիչ Դէորգ Բաշինջաղեանի օգնութեամբ, կենդանի պատկերներով, տալիս է երրորդ համերգը։ Այս համերգը գլուխ բերելու համար նա ստիպուած է եղել յաղթել բազմաթիւ արգելքների. հատատատ համոզուած լինելով, որ ամեն մի նոր գործի սկզբին կըլինեն խոչընդոտներ, նա հաւատալով իր գործի ազգային, եռանդով առաջ է տանում նրան, չընայելով, որ նրա հակառակորդները նրա դէմ ամեն տեսակ հարձանք ենք սկսում։ Մինչև անգամ աշխատում են վայր գցել նրա վարկը և արգելում են գպրոցի աշակերտներին մասնակցել նրա խմբական երգեցողութիւններին։

IV.

Կարա-Մուրզան Բագում 1885 թ. համերգների յաջողութիւնը այնուհետև. Նրա գործունէութիւնը Բագում մինչև 1887 թ. ամառը. արտասահման գնալը, նոր ծանօթութիւններ։ Հեղինակաւոր անձանց կարծիքները. Այիշանի նամակը։ Ղարա-սու-Բազարի երկաթ. համերգը. Բագում առաջին անգամ պատարագը քառաձայն երգելը և արդեւքը. Նրա պարապմունքները Բագում. Աղէքսանդր III. Կալաթ և Մակար կաթուղիկոսի Բագուզալը և Կարա-Մուրզայի նրանց դիմաւորելը իր խմբով։

Առաջին երեք համերգներից յետոյ, Կարա-Մուրզան թողնելով Թիֆլիսը, ուղևորվում է Բագու, որտեղ մեծ համակրութիւն է գտնում մի խումբ ինտելիգենտ մարդկանց կողմից։ Խմբական երգեցողութիւնների համար, Մարդասիրական Ընկերութիւնը նրա տրամադրութեան տակ է դնում ընկերութեան ընդարձակ դահլիճը՝ իր բոլոր յարմարութիւններով։

Բագու քաղաքում յայտարարութիւն տարուց յետոյ, նրան յաջողվում է 40 հոգուց մի խումբ կազմել և 1886 թ., նոյեմբերի 23-ին, Ժողովարանի դահլիճում մի համերգ տալ։ Այս համերգին մասնակցում են Ներսէս Շահվերդեան և Վարդիկեան սօլիստները։ Համերգը բաց է անում «Մեր հայրենիք»-ով։ Սովորաբար այս երգով էր սկսում նա իր բոլոր համերգները։ Բոլոր խմբերգերը անցնում են շատ լաւ և մեծ յաջողութիւն են գտնում հասարակութեան կողմից, որը անդադար ծափահարութիւններով կրկնել

տալիս երգածները։ Հասարակութիւնը ոգևորուած նրա քառաձայնից, իր կողմից, Կարա-Մուրզային նուէր է բերում մի արծաթեայ ծխախոտի տուփ։ Այս նուէրը առաջին դրամականն էր նրա համար։ Երեկոյթից մնացած 200 ռուբլի զուտ արդիւնքի վրայ Մարդասիրական Ընկերութիւնը, իր կողմից, աւելացնում է 200 ռուբլի և այդ փողով նա գնում է մի դաշնամուր՝ մշտական խմբական երգեցողութիւնների համար։ Հռչակաւոր հայ գերասան Հանդուցեալ Պետրոս Ագամեանցը, հիացած նրա համերգից, իբրև գեղարուեստասէր, ոգևորում և խրախուսում է Կարա-Մուրզային, որ նա մեծ յաջողութիւն կունենայ։ Համերգի մասին մեծ գովասանքով են խօսում բոլոր տեղական լրագիրները։ Այս համերգը որոշում է նրա խմբական երգեցողութիւնների ապագան։ Ճարտարակելով իր պարապմունքները Կարա-Մուրզան, նոյն թուի մարտի 15-ին, մի համերգով ուշնում է հայ քառաձայն երգի, առաջին անգամ բեմ գալս բերելու, առաջին տարեդարձը։ Այս համերգի պատճառով նա հեղինակում է „О создатель“ (Ո՜վ ստեղծող) երգը։ Համերգը հասարակութիւնը պատվում է իր ներկայութեամբ և ընդունում է նրան մեծ ոգևորութիւնով։ Զատկական ուշերին, իր ամբողջ խմբով, Բաղդայ հայոց եկեղեցում, ամբողջ պատարագը երգում է քառաձայն. թէ առաջնորդը և թէ ժողովուրդը այդ նորութիւնը հաւանում և ընդունում են շնորհակալութեամբ։

Նա ոգևորուած Բագդում ունեցած իր յաջողութիւններից, արդէն երազում է ընդարձակել իր գործունէութեան ծրագիրը և քառաձայնին մասնակից

անել, Կոմիտասի գանձարան բաղադրիչներ, հայ հասարակութեան։ «Իմ գործերը, գրում է նա իր եղբորը, ստանում են մեծ և մեծ ընթացքներ իրանց ասպարէզի մէջ, հիմայ խումբը բաղկացած է 60 հոգուց և սովորում են թէ աւօրէայ և թէ նոր երգեր։ Որոշել եմ հինգ կնոջերա այստեղի համար, երկու կնոջերա Աստրախանի, 2 Թիֆլիզի և Եկիպտէացոյի, իսկ ամառը, կը գնամ Էջմիածին՝ ներկայացնելու Վեհափառ Կաթուղիկոսին չորս նախագիծ (проектъ). եթէ յաջողուի և եթէ տարէնը տան 5000 բուբլի, կը նամ այնտեղ 5 տարի պայմանով. իմ բոլոր ֆանտազիաները իրագործուել են, այս ալ պէտք է իրագործուի, որովհետև անհրաժեշտ է նրանց և ազգի համար։ Հոս և մեր լինելու քաղաքներս, կ'երգենք եկեղեցու բոլոր պատարագը չորս ձայնով»։

Իր այս ծրագիրը գլուխ բերելու համար, նա սկսում է պատրաստուել նոր, աւելի մեծ պաշարով, գաւառական քաղաքները գնալու համար։ Նայն թուին, նա բաղում մի քանի համերգներ տալուց յետոյ, անցնում է ամառը Բաղանիսի, որտեղ մշակում է քառաձայն «Բարէ», «Հնչեցէն լարք», «Ով տէր Աստուած» և ուրիշ երգեր։ Աշնանը վերադառնալով դարձեալ Բաղու, ամբողջ 1887 թ. մնում է այնտեղ, երբեմն համերգներ և մշտապէս մանաւոր դասեր տալով։

1887 թ. ամառը նա ուղևորվում է արտասահման, հայոց երգեցիկ խմբեր լսելու և լսելու համար կարելոյն, Տաճկաստանի ժողովրդական երգեր հաւաքելու նպատակով։ Իր այդ ճանապարհորդութեան ժամանակ նրան յաջողվում է լսել 27 եկեղեցական, դպրոցական և մանաւոր խմբեր, որոնցից երկու ձայնով երգեցիկ

նա լսում է Կ. Պոլսում, երկու մանաւոր դպրոցներում՝ երաժիշտ Զուխաճեանի աշակերտներից և Վենետիկի Մխիթարեանների միաբանութեան ս. Ղազարու վանքում՝ երաժիշտ Բիանկիսի աշակերտներից։ Զարմանահելով մի մեծ քառաձայն հայկական ազգային, ժողովրդական և եկեղեցական երգեցողութեան, մուտք գործում է վերադառնալ Կովկաս։ Նախքան վերադառնալը, Կ. Պոլսում նա այցելում է տեղական հայ լրագրների խմբագրատուները և տեսակցում է մի քանի բարձրաստիճան անձանց հետ։ Արևելք լրագիրը, 1887 թ. յունիս ամսի 18 համարի մէջ, գրելով Կարա-Մուրզայի Պոլիս այցելելու մասին, ի միջի այլոց, բերում է նրա մի համերգի երգերի ցուցակը և աւելացնում է, որ «առաջիկայ տարին նա (Կարա-Մուրզան) մտադիր է ուղևորուել Հայաստան հաւաքելու ժողովրդական նորանոր երգեր։ Ի Կ. Պոլիս անցուցած քանի մը օրերէն ևս կուզէ օգուտ քաղել՝ իր երաժշտական մասնագիտութեան վերաբերեալ քննութիւններ ընելու համար»։

Պոլսում, ի թիւս մի քանի բարձրաստիճան անձանց, նա այցելում է նաև Խրիմեան Հայրիկին, որը նրան շատ համակրանքով վերաբերուելով, աւելացնում է, որ «ձեր երգերն ալ մեր քարոզի գործը կրնեսնեն, ժողովրդեան սիրտը կրկակցնեն. ներգաշնակ երգը ուսակի վրայ աւելի լաւ կ'ազդի»։ Խորէն Նար-Պէյն նոյնպէս խրախուսում է թէ՝ «երգեցէք որքան կարող էք կեանք, կենդանութիւն. բա՛ գործ է. կատարեալ գործուած եղանակներ մոցրէք ազգի մէջ»։

Պոլսում պատահում է նաև Դամատ-Բաթիպային, որը նոյնպէս մեծ քաջալերանքով է վերաբերվում դէ-

պի նրա գործը և թելագրում է նրան—«քանի երիտասարդ էք, աշխատեցէք միշտ կատարել երաժշտութիւն գրել. ոչ կրգրէք և ծերութեան հասակում. — «Լաց ամպերը», «Մայր Աստուածն»—լաւ կան եղանակներ են. լաւ է՝ «Բաւ է եղբարք վիշ ճկել»—երգի եղանակը. նոյն կարծիքն է յայտնում; դեռ Վենետիկում եղած ժամանակ, Հայր Ղ. Ալիշանը, ասելով, որ «ոչ եղարուեստական հեղինակութիւնները եթէ թէ աշխոյժ չլինեն, կրկորցնեն իրանց կենսունակութիւնը»։

Լսելով այսպիսի հեղինակաւոր անձերի կարծիքները, Կարա-Մուրզան աշխատել է այնուհետև կատարել նոցա ցանկութիւնը, գրելով աւելի կենսունակ և աշխոյժ երգեր։ Առհասարակ, այս ճանապարհորդութեան կարճ ժամանակամիջոցում, նա սերտ բարեկամութիւն է հաստատում մի քանի հեղինակաւոր անձերի հետ, որոնց կարծիքը մեծ նշանակութիւն է ունեցել նրա ապագայ գործունէութեան վրայ։ Այցելելով Վենետիկ, նա շատ մտերմանում է ալէզարդ երգիչ-բանաստեղծ՝ հայր Ալիշանի հետ, որը առանձին համակրանքով է վերաբերվում դէպի նրա գործը և անձնաւորութիւնը։ Աւելորդ չենք համարում մէջ բերել այստեղ հայր Ալիշանի նամակներից մէկը, գրած Կարա-Մուրզային նրա ծանօթանալուց քիչ ժամանակ յետոյ, երբ Կարա-Մուրզան Վենետիկից հեռացել էր արդէն Կ. Պոլիս։

Վենետիկ, ս. Ղազար 20 սեպ. 1887 թ.

Ազնիւ պարոն,

Թէև զրեր էիք ինձ, որ սպասեմ Ձեր Ի Պագուէ գրելու թղթին և հասցէին, բայց ի լրագրաց տեղեկացայ, որ դեռ

ի Պօլիս էք, և ուզեցի կանխել Ձեր բարեկամական զգացմանց փոխադարձ զգացմունքս յայտնել։ Յիրաւի, թէև քանի մ՚օր կեցաք ի Վենետիկ, այլ զրեթէ հաղիւ բարև տալու չափ մնդաւ. եթէ ըստ փափազանացդ յաջողի նորէն գալուստդ, աւելի յաջողութեամբ ալ կ՚ընդունենք մեր նոր երաժիշտը։

Լուսանկար պատկերացս մէկը կորուսեր էք, կամ ուրիշի տուեր էք. միւսը՝ եթէ ինչուան հիմա չէք տուած, որուն որ տալ կ՚ուզէիք, պահեցէք Ձեզի. և այն Ձեր աչակերտին յիշատակ հանեցէք տալ ներփակեալ Տիրամօր պատկերը, որ աւելի յարմար համարիմ այն անձանօթ անձին։ Թէպէտ այս ալ ըստ նիւթականին չնչին բան մի է, այլ սիրողին համար կրնայ ընտիկ մի համարիլ։

Ադամեան դերասանին զրքոյկը կարդացի, և չըգիտնալով իր ուր գտնուիլը, Ձեզ կ՚ուղարկեմ գրածս առ նա, և խնդրեմ որ հասցնէք իրեն և ողջ մնաք։

աղօթարար

Հ. Դեւոնդ Մ. Ալիշանեան։

Ճանապարհորդութեան ժամանակամիջոցին Կարա-Մուրզային յաջողում է հաւաքել ժողովրդական «էլէներ» և մի քանի նորաձև երգեր՝ թւով մօտ 60։ Կոմիտաս վերադառնալիս, իր հայրենի բաղաքից մի քանի տարի բացակայ լինելուց յետոյ, անցնում է այնտեղ, կազմում է մի փոքր երկսեռ խումբ, 20 հոգուց բաղկացած և տալիս է մի գեղեցիկ համերգ։ Սա նրա առաջին խումբն էր, որին մասնակցեց նաև կանանց սեռը։ Այդ ժամանակուանից նա մոտակրթում է այնուհետև խմբերը կազմել երկու սեռից։ Վերադառնալով Բագու, նոր եռանդով, թարմ տպաւորութիւնների ազդեցութեան տակ, նա տալիս է մի քանի համերգներ՝ նոր նոր երգերով։ Նա ցանկանում է եկեղեցում դարձեալ քառաձայն երգել իր խմբով, բայց

նախ քան եկեղեցում երգել ու թոյլ տալը, թեմական առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը, անձամբ գալիս է պատարագի քառաձայն եղանակների կրկնութիւններին և իր հաւանութիւնը տալով, թոյլատրում է նրան երգել եկեղեցում: բայց շատով արգելում է խոսքա և այնուհետև, Կարա-Մուրզան իր ամբողջ ուշը դարձնում է համերգների վրայ և բեմից ծանոթացնում է հայ հասարակութեան՝ իր մշակած քառաձայն եկեղեցական երգեցողութեան, մի քանի գեղեցիկ նմուշների հետ։

1888 թուականի սեղմեր, ինչպէս իրեր գրում է, հանցաւ քաւականին անգոյն։ Բացի մի քանի համերգներից, իր քաջքայած նուիթական մեղոցները մի քիչ կարգի բերելու համար, զբաղվում է ամբողջապէս մատեատոր գասերով, որ նրանից խլում էր օրական մօտ 10 ժամ։ Ապրիլ ամսին, երբ նա պատրաստել էր մի համերգ տալու, հեռագիրը գալիս է, ամենքին սիրելի, հայ ազգի վիպասան Բաֆիին մահը։ Բաֆիու մահուան բոթը նրա վրայ ճնշող տպաւորութիւն է թողնում։ Իսկոյն յետաձգում է համերգը և իր սուգը խառնում է ընդհանուր ազգի սգի հետ ու հեռանում է Հաշքինդ ամառանոցը հանգստանալու։

Աշնանը Բաղուն մեծ պատրաստութիւններ է անում Ալեքսանդր III կայսեր ընդունելութեան համար։ Կարա-Մուրզան հաւաքում է իր խումբը և կայսեր գալու ժամանակ հանդէս է գալիս իր խմբով։ Էջեր պահեստ երգելու, դիմաւորութեան ժամանակ։

Նոյն ժամանակներում Բաղուի հայերը մեծ պատրաստութիւնով ընդունում են Մակար I կաթուղի-

կոմին։ Բազաբի հայերը ճաշ են տալիս Վեհափառին և ճաշի ժամանակ երգելու համար հրաւիրում են Կարա-Մուրզային իր խմբով։ Կարա-Մուրզան ուրախութեամբ ընդունում է այդ առաջարկը և ճաշկերոյթին երգում է խմբով մօտ տասնըչորս ազգային երգեր։ Վեհափառը, ուշադրութեամբ լսելով նրա պատրաստած հաներգները, շատ գոհ է մնում, գովում և օրհնում է նրան, իսկ երեկոյեան դէմ Վեհափառը ցանկանում է նաւով ծովի վերայ մի զբօսանք կատարել։ Մի առանձին նաւակի վրայ նստում է Կարա-Մուրզան իր խմբով. նոցա նաւակը ծփալով գեղաձիծաղ ալիքների վրայ, ուղեկցում է Վեհափառին խմբական ներդաշնակ երգերով և նոյն ոգեւորութիւնով նրան ճանապարհ են գնում դէպ Էջմիածին։

V.

Կարա-Մուրզան վերստին Թիֆլիզում։ Մարդասիրական ընկերութեան յօբելեանը։ Հայրենիք վերադառնալը։ Նոր-Նախիջեւանի հրաւէրը։ Եուշան օպերան։ Երաժշտական գպրոց բանալու մտադրութիւնը։ Արձրունու յօբելեանը։ Խմբով Աստրախան գնալը և այնտեղի գործունէութիւնը։ Նոր երգեր։ Դամառ-Բաթիպան Բագումի։ Միջոցութիւններ նրա համերգի մասին։

Մնալով Բագումի, Կարա-Մուրզային հանգիստ չէ տալիս այն միտքը, որ նա Թիֆլիզում այն յաջողութիւնը չունեցաւ՝ ինչ սպասում էր Կովկասի հայաշատ այդ կենդրոնից։ Նա մտադրվում է իր խմբով գնալ Թիֆլիզ՝ համերգ տալու։ Եւ ահա, 1889 թ. գաղտկան տներին, 40 հոգով, իր պատրաստի խմբով, գալիս է Թիֆլիզ և ապրիլ ամսի 9-ին, տալիս է մի գեղեցիկ ժողովրդական համերգ։ Նրա համերգը այս անգամ ունենում է մեծ յաջողութիւն և այս անգամ նա Թիֆլիզից վերադառնում է լաւ ապաւորութիւնով ապագայի յոյսերով։ Նա չտապում է Բագու նոր պատրաստութիւններ տեսնելու։ Մայիսի 21-ին լրանալու էր Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան քսանեհինգամեայ յօբելեանը, այն ընկերութեան, որը նրան, Թիֆլիզի առաջին անյաջողութիւնից յետոյ, զբրկաց ընդունելց և օգնեց նրան։ Այդ ընկերութիւնը իր բեղմնաւոր գործունէութիւնով արժանացել էր

ընդհանուրիրու ադ չուիթեան և յարգանքին։ Կարա-Մուրզան պատրաստվում է իր բազմամարդ խմբով մասնակցելու յոբելեանի չքեղ հանդիսին։ Մարգասիրական ընկերութեան յոբելեանի առիթով, Հ. Դուկասեանցի տուած բառերի վրայ, յօրինում է մի գեղեցիկ, եռանդալից քայլերգ և երաժշտական խմբի հետ, իր ամբողջ խմբով գալիս է հանդէսին մասնակցելու։ Խումբը բաղկացած է եղել 150 հոգուց։ Հանդէսը խուռն բազմութեան ներկայութեամբ բացվում է Կարա-Մուրզայի, յատուկ այդ օրուայ առիթով գրած, «Մի վառեցիր ի զգօն հոգիս» երգով։ Ուժեղ խմբի քառաձայն և միահամուռ ներդաշնակ երգը հանդիսականների վրայ թողնում է բաղցր տպաւորութիւն և Կարա-Մուրզան, ընկերութեան նախագահից, ստանում է երաժշտական մի գաւազան՝ սակեզօծ ծայրով։

Բաղուից նա մի առ ժամանակով մեկնում է հայրենիք, որտեղ գտնում է իր ծերունի հօրը հիւանդ դրութեան մէջ։ Նա ցանկանում է մնալ հօր մօտ, մինչև նրա առողջանալը, բայց զինելով հօր թախանձանքներին, որը խնդրում է գնալ և գործը չարունակել, վերադառնում է կարճ ժամանակից յետոյ դէպի Բաղու։ Հայրը նախապէս երկար խօսելով նրա հետ, խօսք է առնում նրանից, որ եթէ իրա հետ մի դժբախտութիւն պատահի, նա խնամք կը տանի իրա մօրը, քոյրերին և եղբայրներին։ Կարա-Մուրզան խոստանում է և իր տուած խօսքին նա հաստատ մնաց մինչև իր վերջին բոպէները։

Բաղուից նրան, իր մտերիմ Գամառ-Բաթիպայի միջոցով, հրաւիրում են Նոր-Նախիջևան՝ Արհեստաւորաց

դպրոցում; Դոգոլեան ուսումնարանում; օրիորդաց պրոգիմնազիայում և Հոփխովեան դպրոցում դասեր ստանձնելու, եկեղեցում երգելու և դրամատիկական ընկերութեան ներկայացումների երգեցողութիւնները դեկավարելու համար։ Բայց նա մերժում է այդ առաջարկը և մնում է Բաքուում, որտեղ աշխատում է իր մի նոր հեղինակութեան — „Նուշան“ օպերայի վրայ։ Այդ օպերան նրա առանձին ուշադրութեան առարկան էր։ Բովանդակութիւնը գրել էր Ատրպետը, իսկ նա գրում էր երաժշտութիւնը։ 1890 թ. Յունուարի 4-ին նա գրում է իր եղբօրը, որ հայդ օպերան երեք գործողութեամբ է. բաւական ժամանակ է, որ գրում եմ նախերգանքը և վերջանալու մօտ է։ Երաժշտութիւնը վերին աստիճանի օրիգինալ է, մաքուր է և երաժշտական կանոններին հակառակ չէ. դա իմ կարծիքն է... այսօր նախերգանքը երգեց խումբը, որը այդ եղանակից հրճուեց. սրա վրայ չպէտք է նայել ինչպէս մի փոքր բան իմ շարադրութիւններից, նոյնպէս առանց չըդատել ընդունակութեան և կոմպոզիտորի (երաժշտագէտի) ցենզի մասին։ Պէտք է սպասել Թիֆլիզի ֆենութեան (ОТЗЫВЪ) նա ձեզ մօտ (Թիֆլիզում) մեծ աշխատութիւն կըգտնի, իսկ աւելի մեծ՝ Ս. Պետերբուրգում, որի մասին խորը համոզուած եմ և դա իմ գաղտնիքն է... պէտք է գնել բեմի վրայ, պէտք է որ նրան հաւանեն, որովհետև այդպիսի երաժշտութիւն բեմ չի դուրս եկել։ Ես կարծում եմ, որ մի նորութիւն մնելով յեղաշրջում կը ձգի երաժշտութեան մէջ։ Եթէ ինձ այստեղ չ'հասկանան, ես կը տանեմ Պետերբուրգ, որտեղ ծարաւի են այդպիսի բաներիս։

Կարա-Մուրզային չ՝յաջողուեց ամբողջապէս բեմ դուրս բերել այդ իր փայփայած «Նուշան» օպերան. միայն նրա նախերգանքը, «Հէ՛յ բէգ»-ը, նա համերգների ժամանակ հանդէս էր բերում իբրև մի նմուշ. և լիրաւի, այդ կտորը, իր օրիգինալ արևելեան եղանակով և կոմպոզիցիայով, առանձին քաղցր տպաւորութիւն էր թողնում։

Նրա նախիմնեան չյնալու պատճառներից մէկն էլ այն էր, որ վաղուց նրան զբաղեցնում էր այն միտքը, թէ նախ քան երգերը տարածելը, հարկաւոր է հասարակութեան մէջ լայն կերպով տարածել ձայնագրութեան գիտութիւնը, որով թէ կայուն կլինի երգերի ապագան և թէ առհասարակ նրա միջոցով կարելի կլինի հասարակութեան ճաշակը զարգացնել և մատչելի դարձնել հանճարեղ երաժշտագէտների հեղինակութիւնները։ Դրա համար նա մտածում է կառավարութեան թոյլտուութեամբ, Բագուում բաց անել մի երաժշտական դպրոց, որտեղ, բացի իրանից, հրաւիրելով մի քանի հմուտ երաժիշտներ, սովորացնէին աշակերտներին երաժշտութեան թէորիան, կանոնաւոր երգելու ձևերը և նուագել գործիքների վրայ։ Իր այս ծրագիրը գլուխ բերելու համար, նա խօսում, արծարծում է իր միտքը ամեն տեղ՝ իր ծանօթների մէջ։ Առհասարակ, պրոպագանդան նա համարում էր միշտ առաջին միջոց, մի գործ գլուխ բերելու համար։ Նա գիմում է, իր եղբօր միջոցով, Կայսերական երաժշտական դպրոցի՝ Թիֆլիզի բաժանմունքի այն ժամանակուայ դիրեկտոր Իպոլիտ Իվանովին՝ ծրագրի և առհասարակ ուսումնարանին վերաբերեալ մի քանի հարցերի մասին։ Թէ երաժշտական ուսումնարանի և

թէ Բագուի նահանգական փարչութիւնների կողմից՝ նա գտնում է այդ գործի վերաբերմամբ մեծ համակրութիւն, բայց նրան չի յաջողվում բաց անել իր ցանկացած դպրոցը։ Այնուհետև, նա մտադրվում է իր խմբով շրջել մի քանի հայ քաղաքներ, հայ հասարակութեան ծանօթացնելու քառաձայն երգեցողութեան հետ և տարածելու հայկական երգերը։

Նա նախ մտադրվում է գնալ իր խմբով դարձեալ Թիֆլիզ, յատուկ Գրիգոր Արծրունու յօրելեանին մասնակից լինելու համար։ 1890թ. մայիս ամսին, հայ հասարակութիւնը պատրաստվում էր տօնելու Գրիգոր Արծրունու գրականական և հասարակական գործունէութեան քսանհինգ ամեակը։ Ամեն կողմերից հասարակութիւնը պատրաստվում էր շնորհաւորելու և իր յարգանքի ցոյցերը մատուցանելու Գ. Արծրունունու Կարա-Մուրզան, լինելով նրան չերմ համակրողներից մէկը, հոգով ցանկանում էր նրա յօրելեանին իր խումբով ներկայ լինել, բայց այդ նրան չի յաջողվում։ այդ նա յանձնարարում է իր եղբօրը, որ «Հս և խումբը ընտրում ենք զրեց մեր կողմից պատգամաւոր Գրիգոր Արծրունու յօրելեանին մեր ուղղերձը ներկայացնելու և զայն կարդալուց յետոյ, ըստ պատշաճին մատուցանել նրան։ Իսկ ինքը, ջոկելով իր Բագուի խմբից 30 ձայներ, Ատարխանի թեմական առաջնորդի հրաւէրով, մտադրվում է ուղևորուել Ատարխան. նիւթական միջոց չունենալով ճանապարհի ծախսերի համար, դիմում է իր մի քանի մտերիմ անձնաւորութիւններին և խնդրում ճանապարհածախս. նրա խոստանում են, բայց որոշեալ ժամանակին չեն տալիս այդ ճանապարհածախսը. Կարա-Մուրզան չի համ-

բերում, ծախում է իր տան բոլոր կահ-կարասիքը, իր բոլոր ունեցած իրեղէնները և իր մոտգրութիւնը գլուխ է բերում, անցնում է Աստրախան ու այնտեղ տալիս մի քանի համերգներ։ Վաղուց՝ հայ ժողովրդական երգերից զատ՝ այդ հայ հասարակութեանը մեծ ազգասիրութիւն է պատճառում, գաղափար տալով նոցա հայի վշտի և ուրախութեան ժամերին յօրինած գողտրիկ երգերի մասին։ Այնուհետև, Աստրախանի եկեղեցում երգելու համար տեղացիներից, 80 հոգուց բաղկացած, մի պատկառելի խումբ է կազմում, պատրաստում է 12 խմբապետներ և յաջողութեամբ վերջացնելով իր միսիան, մեկնում է այնտեղից, առանձին շնորհակալական թուղթ ստանալով թեմական առաջնորդից, որով նա յայտնում էր նրան իր գոհունակութիւնը, որ կարճ միջոցում կարողացաւ իր կենդանի երգերով հասարակութեան զանազան խաւերը կապել միմեանց հետ և եկեղեցուց ներդաշնակ երգեցողութիւն հնչեցնել։

Վերադառնալով Բագու, նա հաւաքում է իր ցրուած խմբի միւս անդամները և պատրաստում է Դամառ-Բաթիպայի «Հայերս ինչ անենք» ու «Զգաստ Աստուած» ոտանաւորների եղանակները։ Այդ ժամանակ Բագու է գալիս ինքը Դամառ-Բաթիպան։ Մերունի բանաստեղծը, լսելով նրա ոգեղից երգի աշխոյժ եղանակը, չափազանց զգացվում է։ Բեղմնաւոր հայ վիպասան Ատրպետը՝ Կարա-Մուրզայի ամենամեծ ընկերը, 1901 թ. «Արբիրում» տպած, Կարա-Մուրզայի վերաբերեալ, մի փոքրիկ յիշողութեան մէջ գրում է. «Կարծես դեռ այս ժամին զժգժում է ուղեղումս, ծածանվում է Կարա-Մուրզայի «Ինչ ա-

նենք»-ի եղանակը։ Դեռ չէ անհետացել ականջիս տակից Դամառ-Քաթիպայի այս խօսքերն, այդ եղանակը լսելուց յետոյ, որ թոթովում էր մանկական ոգևորութեամբ, արտասուակալ աչքերով. «Խաչատուր, հոգիս ցնցեցիր, ինձ երկինք բարձրացրիր. այդ ինչպէս ընկնեցար իմ հոգուս խորքերը և այնտեղից առոգանուած այդ բառերը այս նոտերով կենդանացրիր»։ Դեռ այս բոպէիս աչքիս առաջից չի հեռանում ծերունի բանաստեղծի ոգեղմայլ դէմքը, երբ երգեցիկ խումբը նրա մարդարէացած հանգերն էր կրկնում—«Հայը կտիպէ մեհ պատրիարքին»... և Կարա-Մուրզան ոգեսրուած, դաշնամուրը նուագելիս, գլխագծերով, աչքով, ունքով, մօրուքով, ուսերով ու թեւերով նշաններ էր տալիս երգեցիկ խմբին և կենդանացնում, ցնցում կենդանի հասարակութեան։ Դեռ կարծում եմ նոր եմ վերադարձել Թաղիևի թատրոնից. սենեակումս կէս գիշերի խոր լռութիւնն է թագաւորում և անդադար բաղխում են ականջիս Կարա-Մուրզայի ձայնագրած, ծովակի մեռազային ձայնով երգած «Ազատն Աստուած», իր մեղմ, քնքոյշ և ահեղ ու խրոխտ երևէյներով, «Գու զով խնդրեսի» մերամգնոտ սոլո և խմբական եղանակներով և Կարա-Մուրզան բեմի առաջ նստած՝ օրկեստրը կառավարելու։ Այս քաղցր անուրջս անվերջ շարունակվում է, անուշ եղանակները, սոխակային դայլայլիկներով ցընցում են հոգիս և հրճուալի տեսարաններն իրար յաջորդում։ այն անկնունց Նպրանդեանի և Պէշիկթաշլեանի զուարթ դէմքերը նկատելով, լցվում բերկրութեամբ»։

VI.

Կարա-Մուրզայի Թիֆլիզի և Պետրովսկ քաղաքի համերգները։ Բագուի երկաթե խումբը։ Ատրպետի լիշողութիւնները այդ խմբի մասին։ Վիոլոնչելի և Չիկագոյի ցուցանդէսները։ Կարա-Մուրզայի մտադրութիւնը։ Կարա-Մուրզան Ախալցխայում, Աբաստումանում, Ախալքալաքում։ Նրա համերգների տպաւորութիւնը։ Գամառ-Քաթիպայի մահը։ Կարա-Մուրզայի ուռանաւորը։ Նրան նշմարածին հրաւիրելը։ Բագուայ խմբի Նրան հանապարհ ձգելը։

Ազգային և բուն ժողովրդական երգերը՝ հասարակութեանը նրբութեամբ և ներդաշնակած մատակարարելու համար, 1891 թուից, նա սկսում է անդադար շրջել գաւառական քաղաքները։ Նախ և առաջ՝ մի խմբով անցնում է Թիֆլիզ և ապա՝ այնտեղից վերադառնում է ու մենակ գնում Պետրովսկ քաղաքը, ուր, իր եռանդին յատուկ, այդ փոքրիկ քաղաքում, 40 հոգուց մի խումբ է կազմում երկու սեռից և բեմ դուրս գալիս իր խմբով։ Բագուում երկար չէր յաջողվում նրան երկսեռ խումբ կազմել։ Պետրովսկի խմբի յաջողութիւնը խրախուսում է նրան և նա Բագու վերադառնալով, ցանկանում է Բագուի խումբը երկու սեռից կազմելու մտադրութիւնը գլուխ բերել։ Այս անգամ էլ նրա եռանդի առաջ խորտակվում են արգելքները և նրան յաջողվում է մի մեծ, 140 հոգուց բաղկացած, երկսեռ խումբ կազմել։ Այս խմբով, լաւ պատրաստուած, տալիս է մի փառաւոր համերգ.

հասարակութիւնը նրա հանդիսին լիքն է լինում և այս համերգը ամենայաղող խմբերգներից մէկն է լինում։ Այդ համերգի քաղցր տպաւորութեան տակ, Ատրպետը, իր «բերկրալի ժամեր» փոքրիկ յօդուածում,[1]) բացականչում է. «մինթէ կարելի է մոռանալ Թաղիեի տան կլուբի դահլիճում 140 հոգուց բաղկացած երկսեռ խմբով տուած համերգը, քաղցր ժամերը։ Ի՜նչ հոգեզմայլ ոգևորութիւն, ի՜նչ աքանչացումն... Ամբրուլեանի սօլօն, Փոլադ բէգի դերում, այնպիսի զգայի կերպով գերիչխում էր ամբողջ 140 հոգու ձայնին, որ գրգռացրեց հանդիսականների սրտերը. «Հէյ բէգը» այնպիսի ժողովրդականութիւն ստացաւ, որ Բագուի տներում, փողոցներում ամենքն անխտիր երգում էին նրա կտորները, թէև «Նուշան»-ի լիբրէտոն դեռ տպագրուած չէր։ Կարծես դեռ աչքիս առաջն է Բագուի երաստարդութիւնը, որն այդ գիշեր աշխատաւոր գործչին, համերգից յետոյ, ցոյցերով, բենգալեան ճրագներով տուն ճանապարհեց։ Այդ գիշեր Կարա-Մուրզան ուրախութիւնից հրճուածբերկրած չբկարոդացաւ անգամ քնել, հանդստանալ... նա մինչև լոյս ոգեզմայլ նուագեց Նուշան օպերայի տեսարանները, որոնք նոր էր յօրինել-ձայնագրել, անդադար ոգևորելով և ոգևորուելով»։

Գործի յաջողութիւնը այլևս հանդիստ չէ տալիս այդ անհանգիստ մարդուն և նա մտածում է մի յանդուգն քայլ անել։ Նոյն թուականին Վիեննայում լինելու էր երաժշտական-թատերական համաշխարհային ցուցահանդէս, իսկ միւս տարին Չիկագոյում

[1]) „Աղբիւր“ 1901 թ.

մի այլ ցուցահանդէս։ Նրան հանգիստ չէր տալիս այն միտքը, որ հայը անցյալ է օտար ժողովրդների առաջ և շատ աղքեր մինչև անդամ գաղափար չունեն հայի մասին։ Նա կամենում է մի զօրեղ հայկական երգեցիկ խմբով անցնել Ռուսաստանի վրայով Եւրոպա և ապա Ամերիկա, մասնակցելով նախ Վիեննայի և հապա Չիկագոյի համաշխարհային ցուցահանդէսներին, ճանապարհին՝ զուգընթացաբար երոպական մեծ քաղաքները այցելելով իր խմբով, տալ հայկական ազգային և ժողովրդական երգերի մասին—հետևաբար հայի մասին, մի որոշ գաղափար և ծանօթացնել նոյնն Եւրոպայի հետ։ Նա ջերմ կպած գործին, սկսում է թղթակցել զանազան բանիմաց մարդկանց հետ, իր մտադրութիւնը գլուխ բերելու առիթով։ Նաև ցանկանում է իր հեղինակած ձայնագրած երգերը վերածել հինգ լեզուների և տարածել իր հետ հայ երգերի եղանակները։ Նրա այդ միտքը մեծ ընդունելութիւն է գտնում շատերի կողմից։ Սկսում է թղթակցել արտասահմանի և Ռուսաստանի յայտնի մի քանի ազնիվների հետ, որոնք հաւանութիւն տալով նրա ծրագրին, իրանք անդադար շտապեցնում են այդ միտքը գլուխ բերել։

Մի ամբողջ հայ խումբ, հայկական հագուստներով, հայ երգերով պատրաստուած, արտասահմանեան քաղաքների համար նոր բան էր. դա մի սիրուպրիզ էր և բոլորն էլ սպասում էին, որ նա պէտք է մեծ յաջողութիւն ունենա։

Ամբողջապէս այդ մտքին նուիրուած, նա քուն ու հանգիստ չունէր. արդէն խօսել էր խմբի հետ, խումբը յայտնել էր իր պատրաստականութիւնը, բայց

ինչպէս չատ դէպքերում, նոյնպէս և այստեղ Նրան պակասում էր մի բան—փող՝ այդ մեծ ծրագիրը գլուխ բերելու համար. ինքը փող չունէր, իսկ հարուստներին դիմումները իզուր են անցնում և Նրան չի յաջողվում Վիեննայի ցուցահանդէսին համոզել։ Նա աւելի է բորբոքվում, երբ Վիեննայի Նշանաւոր ագենտ Ա. Ֆոն-Մեյերից ստանում է մի ցաւակցական նամակ, որ իր ժամանակին խումբը չ'եկաւ Վիեննա։ «Որքան ես ցաւում եմ, գրում է նա, որ ոչ դուք և ոչ ձեր խումբը չկայ այժմ Վիեննայում, դուք փառաւոր գործ կ'անէիք, եթէ մի օրինիչ կերպ կարողանայիք գալ»... Վիեննա գնալու անյաջողութիւնը նրա միտքից չի կտրում յոյսը։ Աւելի փառուած շարունակում է նա յամառ կերպով իր միտքը իրագործել և հասնել գոնէ Չիկագոյի ցուցահանդէսին։ 1892 թ. սկիզբներին նա գիմում է էլի արտասահմանի մի քանի անձնաւորութիւնների, որոնց թւում նաև արևելեան երգերի հայ երաժիշտ Զուխաճեանցին, որի մի քանի օպերաները Եւրոպայում արդէն մեծ ընդունելութիւն էին գտել, և խնդրում է նրան իր հետ գնալ Չիկագո՝ մասնակցել իր նպատակը իրագործելու։ Զուխաճեանը, ծանօթանալով նրա ծրագրի հետ, գրում է, որ «արդէն ձեր ծրագիրը և տեսութիւնները չատ յարմար տեսայ, սակայն անենց գործադրութիւնն բաւականին դժուար. գրամի չ'գոյութեան պատճառով, ինչպէս դուք ինքներն այս կէտի մէջ խոստովաներ էիք. սակայն ինչպէս որ աշխատութիւնն ամենն բանի կը յաղթէ, դուք ալ յանձն առած էք այս մասին բոլոր ճիգերդ թափել, ձեր մտադրած ծրագիրը ի գլուխ բերելու համար... բաւական է, որ

նախնական ծախքերն հոգալու միջոց գտնէք»... Բայց հէնց այդ նախնական ծախքերու միջոցների չլինելն էր, որ արգելք էր դառնում նրա մտադրութեան իրագործման։ Տեսնելով, որ առ այժմս անհնար է այդ ծրագրի իրագործումը, թողնում է այդ հարցը ապագայի լուծման և սկսում է շրջել, իր փոքր եղբայրների հետ, անգրկոմկասեան բուն հայաբնակ քաղաքները, խմբեր կազմելու համար։ Ամառը, յուլիս ամսին, գնում է Ախալցխա, 60 հոգուց բաղկացած երկսեռ խումբ է կազմում և կարճ միջոցում տալիս է մի համերգ։ Ժողովուրդը ընդունում է նրան ուրախութեամբ և միւս օրը նրա երգերի արձագանքը արդէն լսվում է փողոցներում։ Դժբախտաբար նիւթական յաջողութիւն նա չի ունենում։ Այստեղից անցնում է Աբասթուման, այնտեղ էլ 40 հոգուց բաղկացած երկսեռ խմբով մի համերգ տալու։ Հանդուցեալ թագաժառանգն այն ժամանակ գտնվում էր Աբասթումանում։ Կարա-Մուրզան նրա համար պատրաստում է ռուսական և հայկական երգերից մի համերգ ու իր ներդաշնակ, կենսունակ երգերով մեծ բաւականութիւն է պատճառում ամենքին և ապա ուղևորվում է Ախալքալաք։

Դաւառական այս խուլ անկիւններում, որտեղ հայ կնոջ բեմ դուրս գալը մասներով կարելի է հասնել, Կարա-Մուրզայի երևալովը անխոնջ, կին և օրիորդ նրա եռանդից վարակուած, իրանց հայկական գեղեցիկ հագուստով, հանդէս են գալիս, այն էլ երգերով։ Տեղական բուն հայկական, ժողովրդական, նոցա հասկացողութեան, գեղեցիկ-ներդաշնակ երգերով լցնում է նոցա հոգին բերկրութեամբ, լա-

բում է նոցա ջղերը և ոգևորում իր քաղցրահնչիւն երգերի ակորդներով, մեղմացնելով հայի կոչտացած սիրտը և մայրենի երգը նրան սիրելի դարձնում։ Նա ցնցում, սթափեցնում է նոցա և առաջ է բերում սուրբ ոգևորութիւն և քաղում է նոցա աչքերից զգացած արցունքներ։ Կարա-Մուրզայի անունը մի կախարդական գերբնական նշանակութիւն է ստանում։

Ախալքալաքում, ժողովրդական երգերի այս բովերից մեկում, նա գտնում է մեծ ընդունելութիւն։ Նա նոր երգեր քաղելուց բացի, տալով տեղական ժողովրդին մշակած երգեր, հոգեկան մեծ բաւականութիւն է պատճառում իր հայերդով։ Ժողովրդի խնդրանքը նա պատրաստվում է կրկնել իր երրորդ հայերդը նոր երգերով, բայց բոթաբեր գոյժը բերում է այստեղ անմահ բանաստեղծ Դամառ-Քաթիպայի մահուան լուրը։ Կարա-Մուրզային ամենամտիկ, նրան ոգևորող, ազդի այդ մեծ երգչի մահը նրան շատ տխրեցնում է։ Իսկայն նա թողնում է հայերդը, հաւաքում է տեղական երիտասարդներին, խօսելով այդ մեծ մարդու մահուան մասին, ցանկութիւն է յայտնում չքեղ հանդիսով կատարել նրա հոգեհանգիստը, ուստի սկսում է սովորեցնել խմբին պատարագի արարողութիւնը ամբողջապէս քառաձայն։ Եկեղեցում նրա հոգեհանգստեան երգերու համար և մի շաբաթուայ ընթացքում նա, սովորեցնելով պատարագի արարողութիւնը, փառաւոր հոգեհանգիստ է կատարում տեղական երիտասարդութեան ջանքերով։

Զափագանց դգացուելով Դամառ-Քաթիպայի մահուսվ, նրա մահուան առիթով գրում է մի ոտանաւոր, որի վրայ յօրինուում է նաև յատուկ եղանակ։

22 օդոստոսի 1892 թ.

† Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻՆ։

Հայի «Հոգին» Դամառ-Քաթիպն
Կէս դար երգեց և լրեց,
Թողեց Հային օրն և այրին,
Դրեանք, գութան ու քաշուեց...
—Ինչու, մուսա, ինձ դու ասա,
Այդպէս շուտով հեռացար։
Եւ ումի թողիր դու անաչառ
Քո արժարժած գազափար.
Ո՞ւմ յանձնեցիր քնարդ գերգիս
Ո՞վ պիտ՝ մաչէ քո տեղ սիրտ,
Որու տրուիր մարդ և մորակ
Որ հեչատցնէ հային կերգ...»
—«Քեզ ինչ ասեմ, երգիչդ անդէն,
Հնչեց Դամառն վերեւից,
Դու դեռ մանկիկ գերերջանիկ,
Դիտեմ, չգիտես ինչ է վիշտ...»
Այստեղ հոգին բանաստեղծի
Տրխրեց, ասէր ինձ կարծես,
«Իմն, եթէ կարդայ գիտես,
Ինչ է գրած այս երես»։
—«Վաղ ես գնացել, ով Քաթիպէ
Դու այդ և կիրն»—Այս էր գիրն
Թող որ անցնի մի դար ևս
Յետոյ կուգնաս ու կերգես»։

Ախալքալաքում, բացի համերգներից, նա տեղական երիտասարդներին ծանոթացնում է առանձին դասախոսություններով եւրոպական և հայկական նոտաների հետ, աչքի առաջ ունենալով, որ նախ՝ խմբական երգեր սովորեցնելիս իր գործը կը հեշտանայ և երկրորդ, որ իրա գնալուց յետոյ, իր ձայնագրած երգերը կը շարունակուեն երգուել երկար ժամանակով։ Այսպէս վարվում էր նա Համարեա ամեն մի քաղաքում, որտեղ քիչ թէ շատ աւելի երկար էր կանգ առնում։ Ախալքալաքում մի երկու համերգ տալով, իր ամբողջ խումբը տեղական տարազով լուսանկարել տալուց յետոյ, քաղցր յիշատակ թողնելով, հեռանում է դէպի Բագու։ Արդէն աշուն էր և Բագուն սպասում էր նրան։

Ախալքալաքում նա ծանոթանում է ճեմարանի ուսուցիչ Հանդուցեալ Բ. Յովհաննէսեանցի հետ, որը ոգեսորելով Կարա-Մուրզայի երգերից խոստանում է էջմիածին վերադառնալիս, խոսել ճեմարանի տեսուչ Արիստակէս եպիսկոպոս Մեղրակեանի հետ, նրան ճեմարանում ուսուցիչ հրաւիրելու համար։ Եւ յիրաւի, նոյն տարին, սեպտեմբերի սկզբներին, Արիստակէս եպիսկոպոսը լսելով հայրենիքից նոր վերադարձած, Կարա-Մուրզայի խմբում ամառը մասնակցող, Ախալքալաքցի մի քանի աշակերտների խմբական նեերգաշնակ երգերը և Բ. Յովհաննէսեանցի գովասանքը նրա երգերի մասին, առանց տատանուելու, խնդրի հեռագրում է Կարա-Մուրզային՝ գալ էջմիածին, շաբաթական 6 դասի համար, 1000 ռուբլի ռոճիկով, ճեմարանում աշակերտներին երգեցողութիւն տանելու։

„Խմբին ներդաշնակութեան դասեր էի տալիս, գրում է Կարա-Մուրզան Բագուից իր մեծ եղբօրը, երբ ստացայ այդ հեռագիրը, իսկոյն ցոյց տուի ուսուցիչներին և ուրախական համակրանքներով մեծ յոյգորումներ ստացայ, որ առանց օրէնք բան մտածելու գնամ, որ կարող եմ իմ մուզիկան արժարժել, մեծ օգուտներ բերել... Արիստակէս սրբազանը ինձ ճանաչում է և Վանքի եկեղեցում խնդրել էր, որ մի անգամ երգենք խմբով և մեր երգը հաւանել է. լսել է նմանապէս Մակար կաթողիկոսի այստեղ եղած ժամանակ մեր երգածը... ես վճռել եմ գնալ, դա իմ տասը տարուան բաղձանքն է, որ այժմ ինքն իրեն կատարվում է և ես իրաւունք չունեմ փոքի մասին խօսելու և ոչ մի բան“։ Տեղական ուսուցիչներից մի քանի կարևոր խորհուրդներ ընդունելուց յետոյ, նա յայտնում է հեռագրով իր համաձայնութիւնը և ապա գրում է մի նամակ Արիստակէս եպիսկոպոսին, որ «Աւելորդ չէ ասել, թէ օրքան ուրախացրեց և ոգեւորեց ինձ այդ առաջարկութիւնը։ Մի տասնեակ տարի խրիմում և ահաւասիկ և տասը տարի Կոմկասում անընդհատ երազելուց յետոյ, վերջապէս, շնորհիւ Ձեր համակրանաց, արժանանում եմ հասնել նպատակիս, ծառայել ազգին բառիս բուն նշանակութեամբ։ Այդ հրաւէրով ես արդէն բարոյապէս անսահման վարձատրուած եմ համարում»։

Գործի սիրուն շատ բան զոհելով, Կարա-Մուրզան ուրախութեամբ ընդունում է այդ առաջարկը և պատրաստվում է ճանապարհ ընկնել դէպ Էջմիածին։ Նախ քան մեկնելը նա տալիս է իր հրաժեշտի հաւերգը, որին ներկայ է լինում Բագուի հասարակու-

թիւնը և ոտացիաներով հեռանում է գեղարուեստի տաճարի դռնից։

Կարա-Մուրզան ցաւոք սրտի ստիպուած է լինում թողնել իր սիրած գործը և բարեկամներով, աշակերտներով ու ծանօթներով շրջապատուած, ճանապարհ է ընկնում։ Նախ քան մեկնիլը կայարանում նա մնաւնում է իր խմբի անդամներին, մեկին կամ մի-սին ջերմ խնդրում, ազաչում, խօսում, յանձնարարում է՝ հաստատ պահել գործը, չմեռցնել, կապ պահել իր հետ և խիստ զգացուած, ամբողջ հաւաքուած հասարակութեան քառաձայն երգերով, ճանապարհ է ընկնում։ Նա առաւել ևս յուզիչ է, երբ շարժուող գնացքից լսում է խմբի վերջին երգը.

„Գնա եղբայր Ասատած քեզ հետ,
Ազգի սերը քեզ ընկեր,
Գնա թէև „չենք“ կարող գալ
Բայց „մեր“ հոգին քեզ ընկեր“...

Դժուար էր Կարա-Մուրզայի համար բաժանուել սեռա կերպով կապուած մի խմբից և կիսատ թողնել մի գործ, որը արդէն սուացել էր իր ուղղութիւնը, բայց նրա երազը արդէն կատարուելու մօտ էր և նա թռչում էր այնտեղ, որտեղ վաղուց ցանկանում էր լինել։ Մօտ 20 տարի է երազում էի գնալ Էջմիածին, գրում է նա, ճեմարանում դասեր տալ և եկեղեցում պատարագի արարողութիւնը քառաձայն գնել և խումբ կազմաւորել։ Արա հետ դեռ շատ բաներ էի երազում։ Թէ ինչպէս առաջի ընթացքում 50—60 հոգի ուսուցիչներ—խմբապետներ պատրաստել և որոշեալ թիւ աւարտողներին՝ ուղարկել ժողովրդական մէջ,

զանազան տեղեր՝ քառաձայն երգեր տարածելու>...
Այժմ հեռանալով Բագուից, որը ութը տարի շարու-
նակ նրան ընդունել էր գրկաբաց, նրան զբաղեցնում
էր միայն մի միտք, թէ արդեօք ինչ ընդունելու-
թիւն կը գտնի նրա այդ նոր գործը—քառաձայնը
Լիմիածնում։

VII.

Կարա-Մուրզան Էջմիածնում. առաջին տպատրութիւնը. Նրա հալեացքը Էջմիածնի մասին։ Ընտանիքը տեղափոխիլը Երևանից Էջմիածին։ Ձեմարանում առաջին գարն և նրա տպատրութիւնը. քառամսեայ ձեմարանում, Նրա զրաղմունքութեան ծրագիրը. զրաղմունքութիւնը. աշակերտների վերաբերմունքը։ Վաղարշապատ, Երևանի, Ազէքսանդրապոլի և Դգդրի համերգները։ Իրիմեան Հայրիկի Էջմիածին գալը. Կարա-Մուրզայի դիմաւորելը. տեսակցութիւնը կաթողիկոսի հետ։ Կարա-Մուրզան փառքի զողաթնակիսում. Նրա ծրագրի խորտակուելը և Էջմիածնից հեռանալը. հրաժեշտ աշակերտների հետ. մի նուէր ի դիմաց աշակերտների Նամակ "Մշակ"-ի խմբագրութեան իր ծրագրի մասին։

Հասնելով Երևան, Կարա-Մուրզան իր ընտանիքը թողնում է այնտեղ, իսկ ինքը սրտատրոփ չտատում է Էջմիածին։

«Այս ճանապարհորդութիւնը գիւթիչ էր, գրում է նա, իբրև բնութիւն ինքն ըստ ինքեան ոչինչ, բայց քանի մտնենում էի Վաղարշապատին, այնքան աւելի կենդանանում էր այս սրբավայրը երևակայութեանս մէջ... Ահա երևում են հեռուից նախ պահնակների բնակարանը, յետոյ գլխարկի նման յայտնի չինար ծառը, ապա Հռիփսիմէ, Նոզակաթ վանքերը, Մայր տաճարը, ճեմարանը... Մտնում եմ Վաղարշապատ մի առանձին պատկառանքով... Հասնելով Էջմիածնի վանքի դուռը, իջայ կառքից, անցնելով ոտով դեպի գէպի ներս, բակը։ Ասանդուխքներից իջայ և հաստ որ

գնացի՝ հսկայ, վսեմ և սուրբ տաճարը անմիջապէս գիմաց յայտնուեց։ Մի բոպէ անշարժ մնացի. տպաւորութիւնը անբացատրելի զօրեղ էր›...

Էջմիածնում նա տեսակցում է Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանցի հետ, որը նրան շատ սիրով ընդունում՝ ու նոյն գիշերն և իսկ տանում է նրան ճեմարանի ուսուցչական ժողով և ծանօթացնում է նրան ուսուցիչների հետ։ Ժողովից նա հեռանում է շատ լաւ տպաւորութեան տակ և այդ գիշերը, երբ նա հոգով և մարմնով Էջմիածնումն էր և տեսնում է որ իր երազը կիսով չափ իրագործուած է, իրան չափազանց երջանիկ է զգում։ Այսպէս է նկարագրում նա մի հատուածով, իր յիշատակագրի մէջ, Էջմիածնի առաջին առաւօտը, առաջի գիշերուայ լաւ տպաւորութիւնից յետոյ։ «Առաւօտեան զանգակների ձայնից զարթեցայ։ Տարօրինակ թուաց այստեղի զանգակների ձայնը և թէ եղանակը։ Ես ինքս լաւ զանգահարում էի. Խրիմ միշտ հաւաքվում էին ինձ լսելու, ինչպէս չորս զանգակով զանգան հանգերով եղանակներ էի նուագում։ Բայց այն մոռացայ, այստեղ այս երկու զանգակների կէնտ-կէնտ հարուածներն էին լաւ, այստեղ այս էր գուրեկան։ Սա Էջմիածինն էր... Տեղիցս վեր կացայ շատ զուարթ, կարծես նոր աշխարհ եկած լինէի... Սիրտս հրճվում էր, սրանից էլ մեծ երջանկութիւն չէր կարող լինել... սիւն, պատ, քար, ծառ, նեղ անկիւն, սանդուխք, բոլորն էլ սրբավայր էին թուում՝ ծառայ անցորդ, շինական մուրացկան—ով երևայ, բոլոր այստեղի մարդիկն էլ սուրբեր էին երևում։ Դատողութեամբ գիտէի, որ այդպէս չէ, բայց ասում եմ, որ թուում,

երևում էին... Նատ էր գրաւել Էջմիածինը. չէի ուզում, որ այստեղ լինեն մեղաւորներ, ապականուած, կեղտոտ, սոսոր հոգի մարդիկ... Ասում էի ինքս ինձ՝ այստեղ եկողներն էլ պէտք է պատրաստուած գան. կենտրոնական հաշիներ, կոնիները վերջացնեն—մաքրեն, թշնամիների հետ հաշտուեն ու այնպէս համարձակուեն մտնել այս՝ ի սկզբանէ սուրբ տեղը... կամ՝ չպէտք է գալ, չպէտք է պղծել այս սրբութիւնը... իսկ ես մտածում էի—կարող եմ արդեօք...»

Էջմիածինը հմայել էր Կարա-Մուրզային և նա չտատանում էր որքան կարելի է շուտ հաստատուել այդ գեղեցիկ վայրում։ Երկրորդ օրը, հանգուցեալ տեղապահ Երևանա արքեպիսկոպոսին տեսնելուց յետոյ, երբ ամեն ինչ վերջացնում է և նրա մէջ հաստատւում է այն միտքը, որ ինքը մնալու է Էջմիածնում, քաղցր տպաւորութիւնների տակ, ուրախ սրտով պատմում է Երևան իր ընտանիքը բերելու։ Նա իրան այնքան բաղդաւոր է զգում, որ փողոցներից անցնելիս և թէ ճանապարհին, ամեն ինչ, թէ անասուն, թէ ծառ, թէ քար նրան գեղեցիկ են թւում և «բոլորն էլ կարծես ինձ էին նայում մի առանձին ուշադրութեամբ, գրում է նա, կարծես պատրաստւում էին ինձ հետ խօսելու»։

Վերադառնալով Էջմիածին, միւս օրից սկսում է դասաւանութիւնը ճեմարանի դ. դասարանում։ Իսկ երեկոյեան, ամբողջ ուսուցչական խմբի առաջ, բոլոր աշակերտներին, թւով 150, հաւաքելով ճեմարանի «Հանդիսարանը», իր սովորական եռանդով աշակերտներին ձայների բաժանելով, մի քանի բոպէում ճեմարանի պատերի մէջ առաջի անգամ ուժեղ հնչեցնում է խմբական—քառաձայն „մեր հայրենիք թըչ-

ուսա, անտէր» խաղացու ազգկայ երգը։ Տպաւորութիւնը մեծ է լինում, ամենքը զգացվում են և կենդանութիւն ստանում։

Ճեմարանում ուսուցիչ մտնելով նրա ցանկութիւնը և նպատակն էր.

ա. Պատրաստել ճեմարանում դպրոցների համար հմուտ ձայնագրագէտ ուսուցիչներ, որոնք միևնոյն ժամանակ կարողանային դասարաններում գտնել 2 ձայնով երգ անցնել։

բ. Պատրաստել խմբապետներ, որոնք կարողանային կազմել խմբեր և արդէն ներգաչնական քառաձայն պատարագի արարողութիւնը և այլ երգեր երգելու համար, նպատակ ունենալով, պատրաստելու ժամանակ, աւելի ուշք դարձնել եկեղեցական երգեցողութեան՝ մասնաւորապէս շարականները դիւրին և լաւ կերպով երգելու։

գ. Պարապել ընդունակ աշակերտների հետ առանձին և ուղարկել նրանց շարունակելու և կատարելագործուելու։

դ. Կազմել ճեմարանում երկու խումբ գործիքների վրայ ածելու՝ մէկը լսարաններից, իսկ միւսը դասարաններից։ Բացի դրանից, տալ հայկական նոտաներով ձեռնարկներ, դասագրքեր և այլն։

Այս ծրագիրը գլուխ բերելու համար նրան հարկաւոր էր առնուազն երեք տարի մնալ Էջմիածնում գործելու։ Նախապէս նա մտածում է աշակերտների և թէ վանքի միաբանութեան մէջ մտցնել երաժշտական ոգի, զարգացնել նոցա ճաշակը, որ նոքա չխորշեն քառաձայնից։ Դրա համար նա ծրագրած էր՝ պարապել աշակերտների հետ յաճախակի խմբական եր-

գեցողութեամբ, հանդէսներ սարքել, ծանօթացնել նրանց արևմտեան-եւրոպական երաժշտութեան հետ և այլն. կազմել ընդհանուր դասախօսութիւններ, զբաղուել երաժշտական արուեստին հարցերով, նուագել դաշնամուրի վրայ մի որոշ ուղղութեան պիեսաներ, բացատրելով նրանց էութիւնը, ծանօթացնելով հեղինակների և նրանց երկերի հետ։ Այդ միջոցով համեմատել արևելեան երաժշտութիւնը արևմտեանի հետ, տալ դաշնամուրի դասեր և այլն։ Ծրագիրը թէև մեծ էր, բայց նա ընդունակ էր գլուխ բերելու իր ծրագրածը։

Կարճ ժամանակամիջոցում իր եռանդով և այս գեղեցիկ ցանկութիւններով նա գրաւում է ամբողջ աշակերտների համակրանքը, որոնք եռանդով կպչելով գործին, մի չարաթուայ ընթացքում սովորելով պատարագի ամբողջ արարողութիւնը քառաձայն և մի քանի ազգային երգեր, հանդէս են գալիս Թադէոս և Բարդուղիմէոս՝ Հայաստանի առաջին լուսաւորիչների տօնին, որ մեծ չքեղութեամբ կատարվում է Էջմիածնում, ամբողջ խմբով երգելու և Էջմիածնի մայր տաճարը առաջին անգամ թնդացնում քառաձայնի ներդաշնակ ակկորդներով, բազմաթիւ ունկնդիրների զգացուած մրմունջների հետ։ Այնուհետև տօն չի անցել, որ Կարա-Մուրզան հանդէս չգար նոր երգերով, իր պատկառելի խմբով։ Ամեն անգամ նրա սիրտը հրճվում էր, երբ 150 հոգի միահամուռ, միահոգի, եռանդով վարակուած սկսում էին «Բամբ որոտան... բարձր բամբիւնք յԱրարատեան դաշան 'ի վայր» և այդ երգերի ազդեցութեան տակ իսկապէս որ «արի արանց աւիւն-եռանդն առատանար»...

Կարա-Մուրզան ինչպես ծրագրել, այնպես էլ սկսել էր իր գործը։ Ցերեկները նա զբաղուած էր դասերով, գիշերները շարականները և հոգևոր երգերը քառաձայնի վերածելով, իսկ ազատ ժամերին հաւաքելով աշակերտներին՝ դասախօսում, ուսուցանում և սովորեցնում էր նոր խմբական ժողովրդական, ազգային և եկեղեցական երգեր։ Ճեմարանի աշակերտների հերթով եկեղեցի գնալու դժուար գործը՝ փոքրերին առաւօտեան յուսածագին, ձմեռուայ ցրտերին «փոխ» ասելուց ազատել, կանոնաւորել և կարգի էր գձել։ Աշակերտները զուարթացել և ներշնչուել էին եռանդով։ Սովորացրել էր նրանց քայլերգեր և ամեն անգամ զբօսանք էին կատարում նրա երգերի ուղեկցութեամբ։ Ամեն ինչ կարգին էր։ Կեանքը եռում էր ճեմարանում։ Պակաս էր մի դաշնամուր, այն էլ կարողացաւ յաջողեցնել, բերել տալ և այնուհետև խմբական երգերը դաշնամուրի ուժեղ ակորդների հետ էին հնչում։ Բացի ճեմարանից, Վաղարշապատ գիւղում; տեղական հասարակութիւնից, ճեմարանի և գիւղի ուսուցիչներից, մօտ 50 հոգուց, մի երկսեռ խումբ էր կազմել, որոնց հետ պարապելով, գիւղի հասարակութեան մեծ բաւականութիւն էր պատճառում իր քառաձայն համերգներով, զարթեցնելով նրանց իրանց թմրած դրութիւնից։ Տօների ազատ օրերին, Երևանի հասարակութեան խնդիրքով, Երևանում 70 հոգուց մի խումբ է կազմում և տալիս է մի փառաւոր համերգ։ Իսկ ամառուայ արձակուրդներին անցնում է Ակէքսանդրապոլ, որտեղ նոյնպէս 60 հոգուց բաղկացած երկսեռ խմբով բեմ է հանում ժողովրդական և ազգային քառաձայն երգերը

և կենդանութիւն տուում տեղական ժողովրդեան մէջ։ Անուշադիր չի թողնում Էջմիածնից ոչ հեռու Իգդիր գիւղաքաղաքը, որը Անդրկովկասի Հայաբնակ տեղերի հետ համեմատած յայտնի է իր գեղեցիկ ժողովրդական լեռներով ու երգերով։ Այստեղ թէ ժողովրդին զուարճութիւն է պատճառում՝ իր քառաձայն մշակած երգերով և թէ ինքը նորանից նոր երգերի պաշար վերցնելով՝ դառնում է Էջմիածին և սկսում է աշակերտներին նոր երգեր սովորեցնել Հայոց Խրիմեան Հայրիկին դիմաւորելու համար։

Էջմիածնում ամէն օր տեղեկութիւններ էր ստացվում՝ թէ ինչ փառաւոր ընդունելութիւններ էին անում հայ և այլ ազգի հասարակութիւնները Հայոց Հայրիկին։ Բնական էր, որ փառաւոր ընդունելութիւնը պէտք է լինէր նաև Էջմիածնում և Կարա-Մուրզան մասնակից էր լինելու այդ ընդունելութեան՝ ճեմարանի աշակերտների հետ միասին։ Ուստի նա մեծ ջանքեր էր թափում իր խմբական երգերի վրայ և առաջին անգամ Հայոց Հայրիկին Կ.-Պոլսում տեսակցելուց յետոյ, այժմ Էջմիածնում դիմաւորում է նրան իր զուարթ, աշխոյժ երգերով և յատուկ նրա գայտառան ասթիւ յօրինում է մի խմբական օրհներգակ։

«Հայրիկը ինձ լաւ ընդունեց, գրում է նա եղբարը, և երկու անգամ շնորհակալութիւն յայտնեց պատարագի արարողութիւնը քառաձայն խմբուց յետոյ։ Այսօր ունեցայ տեսակցութիւն (ауденція), խօսեցինք մի ժամից աւելի, նա յիշեց ինձ Պոլսից, լրագիրներից և խմբովին ուղարկած հեռագիրներից»։

Այդպէս ազնիւ հանդէսները, Էջմիածնի կեանքը դարձեալ խաղաղուեց և Կարա-Մուրզայի գործը

գնում էր իր ծրագրով։ Կարծես ամեն բան իր կարգին էր. թէ դասերը, թէ խմբական երգեցողութիւնները չարունակվում էին կրկնապատիկ եռանդով։ Նոր նոր երգերը բազմացնում էին աշակերտների պաշարը և զարգացնում նոցա ճաշակը։ Ամեն կիրակի և ոտն օրերին մայր տաճարում՝ երգում էին ներդաշնակ պատարագի քառաձայն արարողութիւնը։ Կարա-Մուրզան հանգիստ չունէր, գործում էր առաւօտից մինչև երեկոյ և չափազանց գոհ ու երջանիկ էր իր վիճակից։

Բայց աւաղ, որ երկար չկարողացաւ վայելել իր այդ հրճուանքը. երբ արդէն նա հասել էր իր ցանկութեան գագաթնակէտին, երբ գործը նրա մէջ արիւն և մարմին դարձած առաջ էր տարվում, երբ ամեն ինչ կարծէք կատարեալ էր, մի քանի անճաւորութիւնների ցածր ինտրիգների շնորհիւ, յանկարծ խորտակվում է նրա գործը, հեռանալ է նրա ամբողջ ծրագիրը։ Էջմիածնում սկսում են նրան հալածել ամեն կերպ, քառաձայնը Աստծուն հաճելի չէ ասելով, որ նա կաթոլիկ է և այլ այսպիսի անհեթեթ պատճառներ բերելով։ Կարա-Մուրզայի ասողը թեքուած էր և նա ստիպուած է լինում թողնել իր պաշտելի գործը, տեսնելով իր յոյսերը խորտակուած, տեսնելով, որ դեռ երկար ժամանակ է հարկաւոր, որ իր հակառակորդները հասկանան երաժշտութեան և գեղարուեստի նշանակութիւնը։ Երբ հեռացաւ նրա ժամանակուայ ճեմարանի տեսուչ Արիստակէս եպիսկոպոս Մեգրակեանը, նրա օգնական Բ. Մաղաքէյեանցը և ամբողջ ուսուցչական խումբ, Կարա-Մուրզան ստիպուած եղաւ կիսատ թողնել իր սիրելի գործը, աշակերտները և դառն կսկիծով հեռանալ

1893 թ. Նոյեմբեր ամսին։ Արտաշարժ էր նրա բա-
ժանումը իր աշակերտներից, որոնք այնքան ջերմ
սիրով կապուած էին նրա հետ։ Հրաժեշտի ժամա-
նակ ներկաների յարանցիներից մէկը՝ Հանգուցեալ
Գրիգորը Թերեզիանը ի դիմաց, Կարա-Մուրզայի
տարին նուագուած, բոլոր սաների կարդում է իր հե-
ւեւեալ ոտանաւորը։

Նուէր

Կարա-Մուրզային

Անձնուէր երգչին.

Նանգնած կորցրած ամբիոնիդ վրայ
Քո շուրջդ ես նայում, ամենքին դիտում։
Ուզում ես խօսել, լեզուդ կաչկանդում,
Քո ներքին մարդը քեզ չէ ենթարկվում։
Ուզում ես պարզել սրտիդ ցաւերը,
Ինդարման վիրքը մեր առաջ բանալ,
Բայց մի սուրբ դրդում և սուրբ զգացում
Քեզ չէ թոյլատրում, ազատ չի թողնում։
Արդ քո հաւատն է, անկեղծ հաւատդ.
Այ տոիգում է քեզ յարգել մեծ մարդուն։
Քո փիհանձ հոգին չի կարող տանել
Արատ կամ սև բիծ տալ նրա անուան։
Բայց չէ՞ խորտակուեց պատը չինական...
Հոգեպին ազիցդ դոյդ արտասուքներ
Եւ շրթունքդ՝ ազացդ հետ միաբանած
Ինչպէս ուժգին խօսք մարդարտահիւս...
Մէջ դնելի եղբայր, սէր և առ ընկեր,
Թող այս լինի ձեզ իմ վերջին խօսքերս։

Իսկ մենք ոուրբ սիրով քեզ կ'ասենք այսքան.
—«Գնա դու անվախ, անձնուէր երգիչ
Փչոտ ուղիով, լի լերկ քարերով.
Գնա դու մաքրիր խոպան սրտերը,
Նողչոզուն արշալոյս քեզ է սպասում»

Գաբրիէլ Թերսէքլեան.

1893 թ. 13 Նոյեմբերի։

Դարձեալ վիճակուած էր Կարա-Մուրզային քանդել իր հիւսած բունը և հեռանալ սրտի մտրմնջու�մով։ Մանր էր այդ հարուածը և նա դրա ազդեցութեան տակ մի նամակով, «Մշակ»-ի խմբագրութեան առաջ, բաց է անում իր սիրտը։

«Ափսոս իմ ծրագիր, ափսոս իմ նպատակ, մտադրութիւն... Նրանք որտեղ պիտի իրագործուեն— յայտնի չէ։ Այս բոպէիս գմեռ խորտակուած նաւակի նման ծփում են կատաղի ալիքների մէջ. որ ափին պիտի մօտենան արդեօք...

Ի՞նչ յոյսերով եկայ Էջմիածին և ինչպէս, գրեթէ ոչինչ չը կատարած, յետ եմ դառնում։ Երկու տարի ևս և իմ ծրագիրը իր վախճանին հասած կլիներ...

Մեր ազգը գնալով զարգանում է. նրան պէտք է զարգացնել երաժշտութեամբ. դրա համար մեծ բաների դիմել առ այժմ չենք կարող, բայց դա չէ նշանակում, որ փոքր բանի էլ ձեռք չը պարզենք։ Փոքր միջոցներով ազգը կարող ենք զարգացնել երաժշտութեան մէջ, դիցուք մի քիչ, իսկ մեծ միջոցների սպասելով և ոչինչ չանելով չենք զարգացնում բոլորովին.

ի հարիւրէ բաւ է մի քիչ բան ասէինք. ինձ յաջողուել է մեր երգերը արժարժելու համար ձեռք բերել մի փոքր մեքենայ, այն է, ուր գնում մի փոքր խումբ կազմեր, մի քիչ պարապել, մի քանի երգ սովորեցնել և ցնծեցնել ժողովրդին ցուցնելու։ Լաւ կլիներ ուրիշները մեզ մեքենաներով անէին այդ, բայց չեն անում։

Մեզ շաբաթական եմ իմ գասած մեքենայով գործ տանում։ գործի դրութիւնը և ծառայը կարելի է մեզ դեռ շատ ժամանակ՝ մի տասնեակ տարի ևս միևնոյնը, բայց հոգ չէ, բան իս, ասի չ'գոյէ, այդ էլ առաջի բաներն է։ ինչպէս փորձերը ցոյց են տալիս հարիւրաւոր է միայն խմբերի թիւը աւելացնելու։ Դէպքերնեան հեմարանում գերապատիւ Արիստակէս եպիսկոպոս Մեգրակեանը իմ ծրագիրը ընդունեց. երեք տարուայ ընթացքում առաջի անգամ կարող էին դարձ դալ մօտ 40—50 հոգի ընտիր երգեցողութեան ուսուցիչներ և խմբապետներ, ոչ այնպիսի նախապատրաստներ, որ մինչև այժմ կան, այլ տեսակառաջնոյ և գործնականապէս փիչ թէ շատ երաժշտութիւն հասկացողներ՝ գնել այն չափով, որ կարողանան ուսումնարաններում սովորեցնել երկձայն երգեր, եկեղեցիների համար քառաձայն պատարագ և փոքրիկ ծառայով հաւերգների համար կազմել բեմական խմբեր։ Այժմ ես մենակ կարողանում եմ ամենաշատը տարին երեք կամ չորս խումբ պատրաստել, եթէ պակաս, իսկ եթէ գիւղը 50 խմբապետներ էլի լինէին, նրանք էլ իրաքանչիւրը տարեկան մի-մի խումբ կազմէին, կաւելանար տարին 50 խումբ ևս։ Դարձեալ դիտիր մեծ է. երկրորդ, երրորդ տարին կրկնամապատիկ աւելի և աւելի։

Հայիս սկսել էինք կանոնաւոր քառաձայն երգեցողութեամբ պարապել ճեմարանում, հէնց երկրորդ տարուայ սկզբում ինձ հեռացրին և էլի մոցրին հին արևելեան անդային ճնշող միաձայն երգեցողութիւնը և անմպատակայարմար դասերը... դրա համար ասում եմ արդեաք արտեղ կիրագործուի իմ ծրագիրը... մոռացիր եմ ի հարկէ այս տարի գնայ զանազան տեղեր և թափառել ինչպէս բախտը կըբերէ»։

1893 թ. Նոյեմբ. 8.

Ս. Էջմիածին։

թեթևցավ. երբ և իցէ ձեզ հետ պատահել է, որ մի ինչ-որ երգ, պատմած, մի որ և է անուշ հանգամանք զբաղեցնէր ձեր միտքը, թէ ոչ, բայց ես աւելի եմ, որ Կարա-Մուրզան խօսքը իմ մէջ հետաքրքրութիւն էր զարթեցնում դէպի նրա անձնաւորութիւնը։ Արքան տարօրինակ էր ինձ համար այդ ամենը. նոյնքան սիրելի էր, քաղցրահնչիւն։ Սիրեցի այդ ամենը. սիրեցի և նրան կրօպին. իսկ թէ ինչու, ես այդ չ գիտեմ, ես հոգերան չեմ, որ դրա պատճառը բացատրեմ։ Բայց ես սրտատրոփ սպասում էի նրան տեսնելու, այդ արդէն ճիշդ է։

Ուրախութեամբ չափ չըկար, երբ լսեցի մի օր, որ Կարա-Մուրզան Շուշի է գալիս խումբ կազմելու։ Ճիշդ չը գիտեմ, թէ այդ որ թուականին էր. միայն այսքանս գիտեմ, որ ես սեմինարիայի տարին դասարանի աշակերտ էի։ Փորձերը մեր դպրոցի դահլիճում պէտք է լինէին։ Այդ բանը ինձ չափազանց ուրախացրեց։ Մի գեղեցիկ օր, դպրոցի ահագին դահլիճը լցված էր երկաթ հասարակութեամբ, այդտեղ կային կանայք, օրիորդներ, բէգիսաներ և հասարակութիւնից շատ շատերը, որոնք բոլորն էլ մի անուշ ուրախ էին տրամադրուած և սպասում էին Կարա-Մուրզայի գալուն։ Ցանկարծ դուռը բացվեց և նրա մատնեանը։ Չը գիտեմ ինչ պատահեց ինձ հետ, միայն այսքանս կասեմ, որ նա իսկապէս սպասածիս հանգամանք տարօրինակ թուաց ինձ։ Տարօրինակ էին մանաւանդ նրա չափազանց երկար մազերը, որոնք ուրիշներին թափվել էին նրա ուսերի վրայ. անկոնդրի տակից երևում էին նրա մեղմ ու կրակոտ աչքերը. հակառակ բաւական լայն էր, իսկ նրա ամբողջ

թեթևցավ. երբ և իցէ ձեզ հետ պատահել է, որ մի ինչ-որ երգ, պատմած, մի որ և է անուշ հանգամանք զբաղեցնէր ձեր միտքը, թէ ոչ, բայց ես աւելի եմ, որ Կարա-Մուրզան խօսքը իմ մէջ հետաքրքրութիւն էր զարթեցնում դէպի նրա անձնաւորութիւնը։ Արքան տարօրինակ էր ինձ համար այդ ամենը. նոյնքան սիրելի էր, քաղցրահնչիւն։ Սիրեցի այդ ամենը. սիրեցի և նրան կրօպին. իսկ թէ ինչու, ես այդ չ գիտեմ, ես հոգերան չեմ, որ դրա պատճառը բացատրեմ։ Բայց ես սրտատրոփ սպասում էի նրան տեսնելու, այդ արդէն ճիշդ է։

Ուրախութեամբ չափ չըկար, երբ լսեցի մի օր, որ Կարա-Մուրզան Շուշի է գալիս խումբ կազմելու։ Ճիշդ չը գիտեմ, թէ այդ որ թուականին էր. միայն այսքանս գիտեմ, որ ես սեմինարիայի տարին դասարանի աշակերտ էի։ Փորձերը մեր դպրոցի դահլիճում պէտք է լինէին։ Այդ բանը ինձ չափազանց ուրախացրեց։ Մի գեղեցիկ օր, դպրոցի ահագին դահլիճը լցված էր երկաթ հասարակութեամբ, այդտեղ կային կանայք, օրիորդներ, բէգիսաներ և հասարակութիւնից շատ շատերը, որոնք բոլորն էլ մի անուշ ուրախ էին տրամադրուած և սպասում էին Կարա-Մուրզայի գալուն։ Ցանկարծ դուռը բացվեց և նրա մատնեանը։ Չը գիտեմ ինչ պատահեց ինձ հետ, միայն այսքանս կասեմ, որ նա իսկապէս սպասածիս հանգամանք տարօրինակ թուաց ինձ։ Տարօրինակ էին մանաւանդ նրա չափազանց երկար մազերը, որոնք ուրիշներին թափվել էին նրա ուսերի վրայ. անկոնդրի տակից երևում էին նրա մեղմ ու կրակոտ աչքերը. հակառակ բաւական լայն էր, իսկ նրա ամբողջ

թեթևցավ. երբ և իցէ ձեզ հետ պատահել է, որ մի ինչ-որ երգ, պատմած, մի որ և է անուշ հանգամանք զբաղեցնէր ձեր միտքը, թէ ոչ, բայց ես աւելի եմ, որ Կարա-Մուրզան խօսքը իմ մէջ հետաքրքրութիւն էր զարթեցնում դէպի նրա անձնաւորութիւնը։ Արքան տարօրինակ էր ինձ համար այդ ամենը. նոյնքան սիրելի էր, քաղցրահնչիւն։ Սիրեցի այդ ամենը. սիրեցի և նրան կրօպին. իսկ թէ ինչու, ես այդ չ գիտեմ, ես հոգերան չեմ, որ դրա պատճառը բացատրեմ։ Բայց ես սրտատրոփ սպասում էի նրան տեսնելու, այդ արդէն ճիշդ է։

Ուրախութեամբ չափ չըկար, երբ լսեցի մի օր, որ Կարա-Մուրզան Շուշի է գալիս խումբ կազմելու։ Ճիշդ չը գիտեմ, թէ այդ որ թուականին էր. միայն այսքանս գիտեմ, որ ես սեմինարիայի տարին դասարանի աշակերտ էի։ Փորձերը մեր դպրոցի դահլիճում պէտք է լինէին։ Այդ բանը ինձ չափազանց ուրախացրեց։ Մի գեղեցիկ օր, դպրոցի ահագին դահլիճը լցված էր երկաթ հասարակութեամբ, այդտեղ կային կանայք, օրիորդներ, բէգիսաներ և հասարակութիւնից շատ շատերը, որոնք բոլորն էլ մի անուշ ուրախ էին տրամադրուած և սպասում էին Կարա-Մուրզայի գալուն։ Ցանկարծ դուռը բացվեց և նրա մատնեանը։ Չը գիտեմ ինչ պատահեց ինձ հետ, միայն այսքանս կասեմ, որ նա իսկապէս սպասածիս հանգամանք տարօրինակ թուաց ինձ։ Տարօրինակ էին մանաւանդ նրա չափազանց երկար մազերը, որոնք ուրիշներին թափվել էին նրա ուսերի վրայ. անկոնդրի տակից երևում էին նրա մեղմ ու կրակոտ աչքերը. հակառակ բաւական լայն էր, իսկ նրա ամբողջ

կազմուածքի ու դէմքի արտայայտութիւնը մի տեսակ վհատութիւն էր արտայայտում։ Դահլիճում լռութիւն էր տիրում, ամենքը սպասում էին, թէ ինչ կը խօսի նա։ Կարա-Մուրզան բոլորին սիրալիր կերպով բարևելուց յետոյ բացատրեց, թէ ինչու է հրաւիրել ներկայ եղողներին և ապա սկսեց նրանց ձայների բաժանել։ Մի քանի րոպէում հանդիսականները իրանց ձայների համեմատ չորս մասերի էին բաժանուած, որոնց թւում գտնվում էի և ես։ Նրա աշխոյժը, եռանդը ուղղակի ինձ զարմանք էին պատճառում։

— Քառորդ ժամից յետոյ դուք քառաձայն երգ կը լսէք, ասաց նա, և սկսեց առաջին ձայնից։

Նա մի այնպիսի համոզմունքով արտասանեց այդ խօսքերը, որ մեզանից իւրաքանչիւրը կամայ-ակամայ նրա համոզմունքին զոլով զգում էր, որ իսկապէս չուտով քառաձայն երգ կը լսէ։ Եւ մինթէ այդ մարմնացեալ համոզմունքը չէր, որ բոլորին կապում էր Կարա-Մուրզայի հետ։ «Մեր հայրենիքը» որոշած ժամին արդէն պատրաստ էր։ Ինչպէս. մինթէ այդ կարելի բան է։ Բայց չէ որ մեր ձայնագրութեան ուսուցիչը նոյն իսկ որ և է միաձայն երգ ամիսների ընթացքում էր սովորեցնում, այն էլ բարկացած ժամին բախումները աշակերտների գլխին տալով, առանչին անգամն էի տեսնում մարդկանց մէջ այդպիսի ահագին տարբերութիւն։ Մի քանի օրվայ մէջ արդէն կոնցերտի ծրագրի մէջ պարունակող երգերը գիտէինք։

Պարապմունքները այնքան ուրախ և աշխոյժ էին կատարվում, որ ոչ ոք մի դժգոհութիւն չէր յայտնում, ոչ ոք մի րոպէ չէր ուշանում։ Փորձի ժամա-

նակ նա գիտէր բոլորի հայացքները իր վրա կենտրոնացնելու։ Ցիշում եմ, թէ ինչպէս մի պարոն մի քիչ անուշադիր էր գտնվել իր հայեացքը ուրիշ կէտի վրա դցելով։ Այդ ժուռ հաեացքը չը վրեպեց Կարա-Մուրզայի աչքերից։ «Ա՛յ, պարոն», դարձաւ նա պատանուն։ «Ձեր բոլորի հայեացքները պէտք է վերջանան ձեռքիս վրա և ոչ թէ նրա տակով ուրիշ կէտերի վրա ծանրանան, ինչպէս ա՛յ, այն օրիորդն է, որի վրա կենտրոնացած է ձեր հայեացքը»։ Ընդհանուր էր ծիծաղը. սակայն մի բոպէ չանցած՝ գործը իր կարգով շարունակվեց։

Մեր խումբը, եթէ չեմ սխալվում, 80 հոգուց էր բաղկացած։ Կենցերոը ահագին բազմութիւն էր գրաւել պ. Խանդամիրեանի թատրոնական դահլիճը։ Կարա-Մուրզայի աչդուութիւնը այդ երեկոյ կատարեալ էր։ Հանդիսականները անվերջ ծափահարութիւններով ընդունեցին նրան։ Մի երկու այդպիսի կենցերտ տալով, իսկ վերջը իր խումբը տեղական տարազով նկարել տալով, մի օր շնորհակալութիւն յայտնեց բոլորիս և յայտնեց, որ միւս օրը մոտակիր է Թիֆլիս ուղևորուելու։ Կարծես թէ բոլորի վրա սառ ջուր մաղվեց։ Կարճ ժամանակամիջոցում մենք այնպէս էինք կապվել նրա հետ, որ անջատվել անկարելի էր թւում։ Սակայն, հակառակ մեր ցանկութեան, միւս օրը ճանապարհ էինք գցում Կարա-Մուրզայինց։

Նուշուց նա անցնում է Գորի քաղաքը, այս վիրախոս սակաւաթիւ հայ հասարակութեան մէջ առանց երկար տատանումների, Գորուայ պէս մի փոքր-

րի քաղաքում 70 հոգուց մի խումբ է կազմում և հանդէս է գալիս երկու համերգներով։

Այդ տեսակ յաջողութիւն միայն Կարա-Մուրզային էր յատուկ։ Այս փոքր վիրախօս քաղաքում, որ տարիների ընթացքում հայ բեմի, հայ թատրոնի երես չէն տեսնում, նա բեմ է հանում կարճ միջոցում տեղական երկսեռ երիտասարդութեանը և կապ է հաստատում հասարակութեան բոլոր խաւերի մէջ։

Դօրիից նա անցնում է Բօրժոմ, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին, 60 հոգուց մի խմբով տալիս է նոր համերգներ և ապա գնում է Դանձակ ու դարձեալ 60 հոգի երկսեռ խմբով քառաձայն երգեր է հնչեցնում հայ բեմից։ Այսպէս, այս անխոնջ մարդը իր մոնդրութիւնը գլուխ բերելու համար, ճանապարհորդում է Անդրկովկասի քաղաքները, համերգներ տալիս ու կարճ ժամանակամիջոցում գաւառական քաղաքներում քառաձայն ազգային և ժողովրդական հայկական երգերը սիրելի և մատչելի է դարձնում ամենքին։ Մինչդեռ նա այդքան եռանդ էր գործ դնում իր գործի յաջողութեան վրայ, նրա առաջ դրվում էին նորանոր արգելքներ. նրա հակառակորդները տարածում էին վատ կարծիքներ նրա համերգների մասին և հալածում նրան։ Բայց ոչ մի արգելք նրան չէր վախեցնում։ Նա երբէք չէր հաւատում, որ գործը կարող է խափանուել։ Նիւթական նեղ դրութիւն, հալածանք, զզուելի չարախօսութիւն և զրկանք արգելք չէին կարող լինել նրա գործի շարունակութեանը։ Քաղաքից քաղաք անցնելով, կարճ միջոցում, շատ անգամ բոլորովին անբարեյաջող հանգամանքներում կոնցերտներ էր տալիս և ամեն

տեղ թողնում գեղեցիկ տպաւորութիւն։ Նա մարմնացած եռանդ էր, մի անյաղթելի հազագիտ մարդ։ Նրա քառաձայներ տարածելու առթիւ Երևանցին մինչև անգամ շրջաբերականներ մի քանի հոգևոր իշխանութիւնների կողմից, որոնցով խստիւ պատուիրվում էր ամեն տեղ երգել միաձայն, առանց ձայների բարդութեան և այլն։ Իբրև մի նմուշ այդ շրջաբերականների, ուշադրդ չենք համարում մէջ բերել այստեղ Երևանի թեմի եկեղեցական-ծխական հայոց ուսումնարանների թեմական տեսուչ Մեսրոպը քահանայ Գեոնջեանցի 1894 թ. փետրվարի 14-ին գրած շրջաբերականը՝ նոյն թեմի դպրոցների վարչութիւններին։ Այդ շրջաբերականը գրում է թեմական տեսուչը Երևանի թեմի առաջնորդ հանգուցեալ Կիրեղ եպիսկ. Արապետանցի շրջաբերականի հիման վրայ։ Վերջինս թէև մի քիչ ձանձրալի, բայց հետաքրքիր և բնորոշ է իր բովանդակութեամբ։

„Ու ուսուցիչս երգեցողութեան յամենայն դպրոցաց մերոց Թանգին Երևանայ ի 16 փետրվարի 1894 թ. № 155 յԱղեքսանդրապոլ։

„Ամենք յերգեցողացն մերոց ուսուցչաց ի սահմանս Կովկասու և Թուրաստանի՝ որ հմուտք են յարուեստին երաժշտութեան՝ ոմն ի հայ ձայնագրութեան և ոմն նաև ի ձայնագրութեան ազգացն Եւրոպացոց՝ իբր ի կատարելագործել զերգս եկեղեցւոյ մերոյ Նկարտալ, խառնին յեկեղեցիս մեր բնդհանրապէս զերգս սուրբ պատարագին և յայսմ յառաջադէմք են՝ որ մեզ ի կենաբանէ բազմարոխ ժողովրդոց մերոց յայլ և յայլ գաւառաց կոչմանց Թուրաստանի ի սակաւաթիւ ժողովրդոց ունին զգաչառն։ Այս արարք նոցա թէպէտ և ըստ հայեցողս ոմանց նորատիպաց մերոց կատարելագործութիւն կամ յառաջադիմութիւն երաժշտական արուեստին համարիցի, սակայն խոտանի է ամենեքին՝ եթէ ի փոփոխել զերգս եկեղեցւոյն յարդիցիցեն և ի կիր արկանիցեն։ Չի եկեղեցի՝ միութիւն բազ-

մութեան ժողովրդոց է. միութիւն եկեղեցւոյ հաստատի ի մի հաւատս մոյ Աստուծոյ և ի ճշմարտութիւն՝ մի է և խնդրուածք աղօթից եկեղեցւոյն և գոհութիւն զշնորհացն Աստուծոյ առ եկեղեցի, ըստ որում և ի մի միաբանութիւն երգեսցէ եկեղեցի զամենայն ինչ աղօթս խնդրբուածաց և զերգս աղիողորմն արտասուաց ապաշխարութեան։ Այս օրէն է եկեղեցւոյ քրիստոնէութեան առ ամենայն ազգս ազգաց։

Ըստ օրինացս այսոցիկ երգոց միաբանութեան եկեղեցւոյ պարտ է ըստ ամենայն պարզութեան երգել յեկեղեցիս, և մի երբէք ճղճմել ի կիսաձայնս և ի բարդութիւնս ձայնից ել և իջից. զի մարթ իցէ և ամենայն ժողովրդեանն միաբանել յերգսն, առանց ինչ խանգարելոյ զարուեստ երաժշտութեանն։ Ըստ որում և միաձայն միաբանել յերգսն։ Որպէս ի սկզբանէ և այսր միտձայն և միաբան պաշտին յերգք միաբանութեան եկեղեցւոյն, նոյնպէս պարտ է առնել և յայսմ հետէ, զի մի փոփոխութեամբ ձայնից խափանիցիմք, խանգարիցիմք զմրմունջ ձայնակցութեան ժողովրդեանն յերգսն միաբանութեան։

Ի մեղէդիս և յատեղիս եկեղեցւոյն միայն միայն լսի բարդութիւն ձայնից երգոց, և զորս օրէն է մոյ ուրուք դպրի երգել։

Ըստ այսմ պատուիրեալ երգչացդ մերոց ուսուցչաց, զի ըստ ծրագրի դպրոցացն յորժամ վարժեսցին աշակերտք յուղիղ ընթերցուածս ձայնագրութեան, յայնժամ ուսուցիք զերգս եկեղեցւոյն երգել ի մի ձայն եւ ի մի միաբանութիւն եկեղեցւոյն ըստ ամենայն պարզութեան, այսպէս ուսանիցին երգել զՍաղմոս, զԱռաւօտ լուսոյ, Յիշեսցուք, զերգս սուրբ պատարագին և այլն։

Չի ազդեցութիւն երգոց ի սիրտ մարդկան՝ ըստ ոգւոյ ստաց բանի երգոյն է, և ոչ ըստ երաժշտութեան. և իմաստ բանի երգոյն ճշտութեամբ հնչին յունկն ժողովրդեան, եթէ պարզաբար լինիցի եղանակ երգոյն, մանաւանդ երգն՝ որոյ պարզ եղանակ մի նորա սովորական ի լսելիս և ի բերան բազմութեան ժողովրդեան և ծերոց և տղայոց, այն սովորական եղանակ՝ առաւել ևս ազդէ ի սիրտ և ի հոգի միաբան երգելեացն»։

1834 թ. գեկտեմբերի վերջերին Էջմիածնի հեմարանում ծագում են խռովություններ և բազմաթիվ աշակերտներ, չկարողանալով տանել հեմարանի այն ժամանակվա բէժիմը, թողնում և հեռանում են գանազան կողմեր։ Նոցանից մի խումբ, մոտ 25 հոգի, գնում են Թիֆլիզ՝ իրանց ուսումը Ներսիսեան դպրանոցում շարունակելու։ Նրանցից մի քանիսը, Երևանի հասարակութեան օգնութեամբ այդ անփոքր պատանիները գալիս են Թիֆլիզ։ Նոցա միակ յոյսը լինում է Կարա-Մուրզան և նա արդարացնում է իր վրայ դրած նոցա յոյսերը։ Իմանալով Թիֆլիզի կացությունը, երբ լսում են, որ Կարա-Մուրզան Թիֆլիզումն է, անմիջապէս գնում են նրա օգնութեան։ Նա անձնական նոցա անակնկալ դալուստը և անօգնականութիւնը, չնայելով, որ ինքը լինում է նեղութեանմանապէս նեղ դրութեան մէջ, այնուամենայնիւ կացությունից անմիջապէս բերում է նրանց՝ առանց այն էլ իր փոքր բնակարանը, տեղաւորում, քաղաքերում է նրանց, որ արդէն յուսահատուելու մոտ են լինում։ Հանգստացնում և անմիջապէս գնում է քաղաք, գիմում է սրան, նրան, «Մշակի» խմբագրութեան, այնուհետև ցուցադրելով այդ աշակերտների անհրաժեշտ դրութիւնը, հեռաց է բերում մի փոքր նեղութեան միջոց և հոգս է տանում նրանց մի կերպ տեղավորելու մի տեղ։ Մինչև անգամ իր ժամացույց գրաւ է դնում, փոքրում է նրանց համար առանձին համարներ և տեղաւորում այնտեղ։ Նրա եռանդը վարակում է այդ պատանիներին, մի ժամանակ կորչում են նրանց երեսից յուսահատութեան կնճիռները, հաստատած լինելով, որ այդ անընկճելի մարդու մոտ-

կութիւնը արդէն իրանց ապահովութեան գրաւականն է։ Նա, իր գիմումներով զանազան մարդկանց, կարողանում է մի ամիս ապահովել այդ աշակերտների ապրուստը և ընտանեկին։ Այնուհետև իր սեփական գործերը թողած, սկսում է պատրաստել նոցա՝ մի համերգ տալու նպատակով նրանց օգտին։ Այդ 25 հոգու մնացած ընկերները վերադառնալով իրանց հայրենիքը, ձմեռ ժամանակ ոչինչ գործ չեն կարողանում գտնել այնտեղ և նրանք ևս հաւաքվում են իրանց ընկերների մօտ՝ Թիֆլիզ։ Նոցա թիւը շատանում է, ապրուստի պահանջը մեծանում և Կարա-Մուրզան հոր նման ամբողջ օրերով նոցա հոգսերով է զբաղվում։ Համերգը յաջողեցնելու համար աշակերտների այդ խմբին միացնելով մի քանի կողմնակի անձեր, պատրաստում է դեկտեմբերի 30-ին հանդէս է գալիս նոր երգերով։ Թէև այս համերգին հասարակութիւնը փայլում է իր բացակայութիւնով, հետևաբար նիւթական օգուտ նա քիչ է ստանում աշակերտների օգտի համար, բայց նա չի յուսահատվում։ դարձեալ մասնաւոր օգնութիւններով իր մի քանի բարեկամների՝ հանգուցեալ Խոջայեան վարդապետի, Ց. Մատաթեանի և ուրիշների հետ կարողանում է նրանց օգնել և ապա դիմում է նոցա հետ Վեհափառ Հայրիկին, խնդրելով թոյլ տալ ընդունելու այդ աշակերտներին նեռսեսեան դպրանոցում։ Քիչ թէ շատ ապահովելով նրանց դրութիւնը, ինքը գնում է Բագու և 1895 թ. փետրվար ամսին, Բաղդասար Հայոց Մարդասիրական Ընկերութեան դրաղարան-ընթերցարանի օգտին, 60 հոգուց բաղկացած երգեցող խմբով, սարքում է մի «Հայկական երեկոյթ»

ա. Ֆենդանի պատկերներով բեմ է դուրս բերում իր դրած «Հրդեհ» և «գաղթականներ» հեղինակությունները, որ թողնում է ցնցող տպաւորություն ամբողջ հասարակության վրայ. Իսկ մարտի 25-ին, իր տասնամեայ բազմաչարչար գործունեության առիթով տալիս է մի համերգ 50 հոգի երկսեռ խմբով. Այս համերգի ժամանակ նա հասարակության տալիս է համառօտ հաշիւ իր 10 տարուայ գործունեության մասին՝ տպուած համերգի ծրագրի վրայ. Ծագած երգեցիկ խմբանկարի հետ միասին։ Այդ առիթով, բացի բազմաթիւ շնորհաւորական հեռագրերից և նամակներից, նիւթական քաջալերութիւն ոչ ոքից չի ստանում։ Այդ տասնամեակը կատարելով նա ոչ թէ ապաստում էր ստանալ նիւթական վարձատրութիւն, այլ իր տուած հաշիւներով ուզեց ցոյց տալ հասարակութեան, որ ոչ մի գործ ձգտումի առանց կանգ չի առնի. Նրա բեղմնաւոր գործունէութեան արդիւնքը հասարակական այդ ասպարէզում այն եղաւ, որ ծանօթացրեց հայ ժողովրդին քառաձայն երգեցողութեան հետ, տարածեց նորա մէջ ազգային և ժողովրդական երգերը, տուեց հակացողութիւն կանանաւոր երգեցողութեան մասին և որ գլխաւորն է չախչախեց այն միտքը թէ «քառաձայնը Աստծուն հաճելի չէ»։

Բացում այդ տարի նա տալիս է դարձեալ երկու համերգ։ Վերջին համերգում Ամիրդեան դերասանի մասնակցութեամբ, օրիգինալով, բեմ է դուրս բերում Դարիայեանի Արշակ II ողբերգութեան մի քանի տեսարանները երգեցողութեամբ և հասարակութեան վրայ թողնում է խորը տպաւորութիւն։

Բազումն նա գրում է, «Ո՞վ է երջանիկ» վերնագրով ֆանտաստիկական մի կոմեդիա երեք գործողութիւնով և վերջ ածում ձայներիս։

Ամառուայ ամիսներին նա անցնում է Կովկասի վիրախոս քաղաքները—Թելաւ, Աղնախ և ապա Զաքաթալա ու Նուխի։ Թէ որքան նա նուիրուած էր իր գործին, բնորոշելու համար յիշենք Թելաւ քաղաքում պատահած մի դէպք, որ հաղորդել է մեզ այնտեղի նախկին-ծխական դպրոցների աւագ ուսուցիչ պ. Միմէոն Ճահվերդեանցը, որ ինքը ականատես է եղել։

«1895 թուի ամառուայ ամիսն էր. դպրոցներում դասատուութիւնները փայլուն դադարել էին. աշակերտները ու աշակերտուհիները ցրուել։ Ցանկարծ մի օր առաւօտեան լուր տարածուեց՝ թէ Կարա-Մուրզան եկել է մեր քաղաքը—Թելաւ, համերգ տալու։ Այս լուրը իրարանցում առաջ բերեց. ով ծանօթ էր Կարա-Մուրզայի եռանդի հետ, գիտէր, որ յաղողութիւն կունենայ նա. իսկ ով միայն անունն էր լսել, նա կասկածանքով էր վերաբերվում այդ յաղողութեանը։ Նա սպասում էի նրան տեսնել, գիտէի, որ նա այսպիսի դէպքերում ամենից առաջ տեղական ուսուցչին պէտք է դիմէ, այդպէս էլ եղաւ։ Մի փոքր խորհրդակցելուց յետոյ, մի երկու ժամուայ ընթացքում, հաւաքեց հարկաւոր անձանց և հէնց նոյն օրը սկսեց փորձերը, վարժութիւնները։ Մի շաբաթ չանցած, Թելաւի նման մի վիրախոս քաղաքում, 60 հոգուց բաղկացած քառաձայն խումբը պատրաստ էր և համերգ տալու օրը նշանակած. սակայն մի դժուարութիւն առաջ եկաւ. (բայց այդ մարդու համար դժուարութիւն ասած բանը գոյութիւն չունէր). դաշ-

նամեր չկար։ Ամբողջ Թեյաուտ մի հատ դաշնամուր կար, ապայ Ա. Տէր-Մատթէոսեանցները, սակայն նա էլ Մուրամանին էր զօրքի հետ։ Ստիպուած հեռադրեցին և իրաւունք ստացան։ Աչքի առաջ ունենալով սան հեռաւորութիւնը, մշակները մերժեցին բերել այդ դաշնամուրը։ Այն ժամանակ, Կարա-Մուրզայի խնդիրքով, բնեցին մի սայլ և դաշնամուրը գիւղական սայլի վրայ դրած, ինքն էլ դաշնամուրի վրայ բազմած, փառաւորապէս, քաղաքի ներքին Ծայրից անցնելով, օրը ցերեկով, յամբաքայլ գոմէշներով, ամբողջ բազարից բերեց թատրան—քաղաքի վերին Ծայրը։ Մի քանի մարդիկ, փոխանակ այդ անենուն եռանդից հիանալու, ուսանեցին Ծաղրել, որ գոմէշներով լծած սայլ է նստել։ Կարա-Մուրզան յաջողութեամբ տուեց ներկայացումը, նշանեց մի քանի օրից յետոյ և նոյն եղանակով դաշնամուրը յետ տարաւ իր տեղը։ Նրան Ծաղրող մարդիկ, տեսնելով այդ անընկճելի մարդու եռանդը և բանը նրա համերգը, խոնարհուել էին նրա տաղանդի առաջ և այժմ օվացիաներ էին անում Ծոմքի հետ լուսանկարուեց նա և իր հրաժեշտը տարով—մեկնեց, իսկ իւր լիշատակը դեռ թարմ է թէ ներկեցիկ խմբի անդամների և թէ ունկնդիրների մէջ...

Կարա-Մուրզայի եռանդը միմիայն մահի առաջ խոնարհուեց և միայն մահից յաղթուեց. սա ուսանելի է։

IX.

Կարա-Մուրզան Կովկասի հիւսիսային և Թուրքստանի հարաւային քաղաքներում. „Казбекъ“ լրագրի թղթակցի կարծիքը. Նրա համերգներին մասնակցողները. այդ համերգների բարերար ազդեցութիւնը. Կարա-Մուրզան Անդրկովկասի քաղաքներում. Փարիզի ցուցահանդէսը. Նրա մտադրութիւնը: Նամակի քաղաքից գրած նամակը իրրև բնորոշող ամեն քաղաքներում թողած նրա համերգների բարերար ազդեցութեան:

1896 թուին Կարա-Մուրզան այցելում է Ղզլար, Վլադիկովկազ, Արմաւիր, Եկատերինոդար, Աստրախան-Դրիսի և Աստրախան-Կովկասի և ամեն տեղ կազմելով 40—50 հոգուց երգեցիկ խմբեր, տալիս է համերգներ և բաւականութիւն պատճառում ոչ թէ հայերին, այլ ծանօթանում է օտարներին հայ երգեցողութեան հետ, օրնէք ուրախութեամբ այցելելով նրա խմբերգներին, բոլորովին զոհ սրտով են հեռացել: Պէտք է խոստովանել, գրում է „Казбекъ“ լրագրի թղթակիցը 1896 թ. նոյն թերթի 70-դ համարում, որ առանձին կասկածանքով մոտենք թատրոն, որտեղ սպասում էինք լսել եւրոպացու հոգուն քիչ բան խոստացող, արևելեան միակերպ մի երաժշտութիւն, բայց օրքան մեծ եղաւ մեր զարմանքը, երբ մեր առաջ տեսանք 70 հոգուց՝ երեխաներից, պատանիներից, կանանցից և տղամարդկանցից կազմած, խիստ ջոկողութեամբ, լաւ պատրաստուած, նուրբ ձայներով մի կանոնաւոր խումբ: Համերգը տրուեց

թարմ և երաժշտական forte և piano-ն զար-
մացրին մեզ իրանց հնչումով, նրբութեամբ և
բազմաձիգ ունկնդիրներին մեծ հրճուանք պատ-
ճառեցին բոլոր երգերը և ամեն № № մի քանի
անգամ կրկնուեցին։ Խմբի կազմը վերին աստիճանի
հետաքրքիր էր։ Մօտ նայելով դէմքերին, դուք կը-
տեսնէիք այստեղ տարբի կարգերում ձեր հարևանու-
հուն, նրա կողքին գիմնազիայի ձեր ծանօթ մի աշա-
կերտ, մեա կողքին Լազարեան ճեմարանի մի սանի,
այնտեղ դարձուհուն, նրա կողքին կանգնած երգում
էր բաս գիմնազիստը, իսկ նրա կողքին կոշկակարը և
այս բոլորը ձեզ ծանօթ դէմքեր, որոնց ամեն օր
պատահում էք փողոցում և ոչ մի մասնագէտ երգիչ։

Ձեր դէպի դարձը և դեղարուեստին նուիրուելը
շարունակող օրում սանդել էր այս դեղեցիկ խումբը,
որ հասարակութեան մեծ զուարճութիւն պատճառեց։

Երբեմն քաղաքից քաղաք, զարդացնել ձեր դէպի
երգը և տալ հասկացողութիւն նրա մասին շատ դե-
ղեցիկ բան է, բայց դրա համար ամեն մի տեղում,
հասարակութեան զանազան խաւերից հաւաքել նորա-
նոր մարդիկ, կազմել նրանցից խմբեր, կազմակերպել
և տալ դեղեցիկ համերգներ, դա ամեն անհատի գործ
չէ։ Մի շաբաթուայ ընթացքում կազմել խումբ, խմբի
մարդկանցը մշակել, նրբացնել և արտիստական ճշտու-
թեամբ և դեղարուեստօրէն կատարել երգեցողու-
թիւնը, այնպիսի մարդկանց հետ, որոնք երբէք չեն
երգել խմբերի հետ և մինչև անգամ հասկացողու-
թիւն չունեն կանոնաւոր երգեցողութեան մասին,
դա բաղդաւորում էր միայն Կարա-Մուրզայինը։ Խմբական
երգեցողութիւնների առաջին փորձերին ներկայ եղող-

ների համար անտանելի էր լսել խառնիճաղանճ ձայներով մի խումբ, բայց մի երկու փորձերից յետոյ, արդէն խղճացող անհոգների ձայները անհետանում կորչում էին, կանոնաւորվում ու համակերպվում և լսվում էր խմբական համակուռ, սահուն և ներդաշնակ երգեր։ Նրա համերգներին ուրախութեամբ մասնակցում էին այն ամենքը, որոնք սիրում էին երգ. իսկ «երգ միայն չար մարդիկը չեն սիրում»։ Հասարակական զանազան ազգարէգներում գործող, զանազան խաւերի ներկայացուցիչները միացած միասին, թէ ծէր, թէ երեխայ, չափահաս և անչափահաս, արհեստաւոր թէ ուսանող, թէ կին և թէ տղամարդ հաւասարապէս երգում էին միասին միևնոյն ոգեորութեամբ։ Ո՞ր քաղաքի խմբի անդամները չեն յիշում այն քաղցր բոպէները, երբ հաւաքուած միասին, թողած մեր մեր հաշիները, զբաղվում էին միայն մի զեղեցիկ գործով—երգեցողութեամբ։ Կարա-Մուրզայի համերգները ամեն տեղ ունէին համակերպող, զանազան խաւերի մէջ բարոյական կապ հաստատող, նշանակութիւն։ Զանազան քաղաքներ թափառելով, նա չէր բաւականանում միայն համերգներ տալով. տեղական սիրողներից կազմած խմբերին պատրաստում էր նաև պատարագի արարողութիւնը մշտապէս ամեն օրերին եկեղեցում բառաձայն երգելու համար։

1897 թ. մինչև 1899 թ. վերջերը նա այցելում է Սիմֆերօպոլ, Դարա-սու-Բազար, Թէոդոսիա, Արմեանսկ, Մելիտոպոլ, Եւպատորիա, Դրիգորոպոլ, Ակկերման, Բիշնև, Օդեսայ, Կերչ, Հին Ղրիմ, Բուխարէստ, Բաքու, Մոսկվա և ամեն տեղ տալիս է համերգներ։ Օդեսայում և Մոսկվայում նա բեմ է դուրս գալիս

ուսանողական խմբերով, իսկ Բուխարայիսի պէս վիրա-
խոս տեղում, որ ուրիշ անգամ չատ դժուար է մի
հայ կին բեմ դուրս բերել, նա 40 հոգուց երկսեռ
խումբ է կազմում։ Նատ տեղերում նրա խմբերին
մասնակցում էին ոչ թէ միայն հայերը այլ և ուրա-
խութեամբ մասնակցել և երգել են հայ երգեր
օտարազգիները։

1899 թ. Մոսկվայից դարձս նա ստիպուած է
լինում զանազան հանգամանքների պատճառով անգ-
�ած նստել Պետրովսկ քաղաքում, նիւթական նեղ
դրութեան մէջ, ապա նրան յաջողվում է գալ Թիֆլիս։

Այս անգամ մշտապէս Թիֆլիսը ընտրելով կենտ-
րոն իր գործունէութեան, զբաղվում է մասնաւոր
դասերով, պատրաստում է եկեղեցական քառաձայն
երգերի համար խմբապետներ, միայն երբեմնակի հե-
ռանում է գաւառական քաղաքները նոր համերգներ
տալու համար։ Նա անցնում է Ղարս, Կաղզուան,
Ղարաբիլիսա և Մարիուպոլ ու վերադառնում է
դարձեալ Թիֆլիս։

1900 թ. Փարիզի ցուցահանդէսը դարձեալ հան-
դիսա չէ տալիս նրան և նա սկսում է դիմումներ
անել մի քանի անձանց մի խումբ Փարիզ տանել նպա-
տակով։ Նրան աւանդարկում են 10,000 բուրլի զա-
նազան նրա համար ճնշող պայմաններով, իսկ նա չի
համաձայնում և նրա մտադրութիւնը դարձեալ մնում
է անկատար։

1901 թ. նա ճանապարհորդում է Գանձակ, Նու-
շի և Շամախի քաղաքները և կրկնում է իր համերգ-
ները։ Մեծ ապաւորութիւն է թողնում ինչպէս ամեն
տեղ, նաև Շամախի քաղաքում։ Նրա համերգների

բարերար ազդեցութիւնը միշտ յիշեցնում էր Կարա-Մուրզային և նրա նուիրական գործը. այդ բարերար ազդեցութիւնը ընտրուելու համար, բերում ենք Ճամանուց գրած պ. Ս. Սարգիսեկեանի նամակի բովանդակութեան հետեւեալ հետաքրքիր մասը։

„Խմբում մանկացող տղերք և աղջկերք, գրում է նա Կարա-Մուրզային, ձեր գնալուց երկար ժամանակ յետոյ շարունակ, ովքեր պատահում էին ինձ, հարցեր էին տալիս, հետաքրքրվում; նամակ էին հարցնում; տեղեկութիւն էին հարցնում ձեր մասին և այլն։ Երբ ասացայ, գոհացում տուի ամենքին ու բարեւեցի ձեր կողմից։ Ձեր և ձեր գործի թողած թարմ տպաւորութիւնը ակամայ խօսեցնել էր տալիս ամեն պատահողի։ Նրանց յարաբերութիւնը իրարու հետ մտերմական էր դարձել՝ կարծէք եղբայրացել էին, ինչպէս մի բարի գործով (թէև կարճ ժամանակ) կապուածներ։ Իրար տեսնելիս մի գաղտնի, անբացատրելի քաղցրութիւն էինք զգում իրարու մէջ. նոյն իսկ այն տուներ, ուր ժողովում էինք, մի տեսակ գիւթիչ զօրութիւն էր ստացել, կախարդիչ և քաղցր էի երևում մեզ։ Խումբ-խումբ տղերք և աղջկերք երեկոները հաւաքվում էին ինձ մօտ, երևի տեսնելու իրանց բարի ուսուցչի զուարճութիւն, հոգեկան բաւականութիւն պատճառող ուրուականը... հոգեկան գաղտնի մղումը նրանց բերում էր ինձ մօտ՝ այն պատերի մէջ, գուցէ և իմ մէջ, տեսնելու մի պատկեր, որ իրանց համար կարճ ժամանակ սիրելի և քաղցր էր։ Խօսում էինք, երգում էինք և ցրվում... հեռանում էին ակամայ, մասամբ գոհացած, մասամբ էլ թերի կամ ինչպէս ասում են՝

ոտը կաղ. սրտի որոնածը, աչքի փնտրածը տեղը չէր, թէև իրանք էլ գիտէին այդ. նման այն բանին, որ երբեմն ասում են սիրտս մի բան է ուզում, բայց ինքս էլ չգիտեմ, թէ ինչ է ուզում“։

„Էս կարծում եմ, որ գործի և գործչի արժանաւորութեան չափը պիտի որոշել իրենից յետոյ թողած այս չափով ու տպաւորութեամբ։ Ինչպէս որ գեղարուեստի զանազան ճիւղերի մէջ լաւը, արժանաւորը նա պիտի համարել, որ աչքի, ականջի կամ սրտի համար գուրեկան է, որ առհասարակ մարդու ճաշակին յարմարվում է՝ գիցուք մի չէնք, մի նկար, մի տեսարան. մի գէմք որ սրտան էլ մարդ տեսած լինի, այնուամենայնիւ երբ նորից է տեսնում, նրա նորութեամբ, կանոնաւոր համաչափութեամբ նրա ճաշակը գրգռող, միաբ, երևակայութիւն բարձրացնող յատկութիւններով, նորից գրաւվում է՝ ուզում է աւելի ու աւելի նայել—մի խօսքով չի բեզարեցնում—մուզիկայի մասին (թոյլ տվէք) նոյնը կարելի է ասել։ Ձեր թողած ժառանգութեան երգերից «Հոգալիս ջան», «բեզի մեռնիմ էշմիածին» և մի քանի ուրիշները, երգվում են այստեղ նոյն իսկ 4—6 տարեկանների թոթոլոզ բերաններում։ Փողոցներում, սանդուխքների վրայ ասոիճանների շարք-շարք կանգնելով, կենդերատային խաղերով են զուարճանում։ Ինչպան կը ծիծաղէիք, եթէ տեսնէիք, թէ նրանց առաջ էլ կանգնած կայ մի փոքրիկ Կարա-Մուրզա. իսկ աւելի հասակաւորները փոքրիկ կենդերաներ է, որ ներկայացնում են այս ու այն տեղ գրօսանելիս անգամ“։

Գործի վեհութիւնը, նրա վերին աստիճանի գաղտը վարմունքը առհասարակ կախարդում էր խմբերին։ Թէև գործի յաջողութեան համար նա զիջողութիւն չգիտէր, երբեմն կարիւր դէպքերում յանդիմանում և չարանում էր թէ հասակաւորի և թէ մանուկի վրայ, բայց այդ յանդիմանութիւնները ոչ ոքի սիրտը չէր ծակում, ոչ ոք չէր վիրաւորվում։ Ամենքը ուրախութեամբ յաճախում էին բոլոր խմբերդներին։ Ո՛չ ոք, նոյն իսկ ձմեռուայ բուք օրերին, պարապմունքներից յետ չէր մնում։ պէտք էր տեսնել նրան պարապմունքները, որ գաղտիար կազմել նրա հրմուութեան և նրա եռանդի մասին։ Ամենագժուար երգերն իսկ, խմբին ամեն մի ձայն առանձին առանձին երգել տալուց յետոյ, կարողանում էր քառաձայնով հանդէս գալ մի նոր երգով. նա վերին աստիճանի հմուտ ուսուցիչ էր։

X.

Կարա-Մուրզան ուսուցիչ առևտրական դպրոցում։ Կովկասի ցուցահանդեսը և Կարա-Մուրզայի մասնակցությունը։ Նրա հասարակական գործունեությունը։ Նրա կարծիքը երաժշտության մասին։ Համերգների հաշիվ։ Կրած վնասը։ Նիթական դրությունը։ Նրա գործունեության ամփոփումը։ հեղինակությունները։ Նրա մասին գրուածքներ զանազան լրագրներում։ Կարա-Մուրզայի երեխանները և նրա հոգսը նրանց կրթության վրայ։ Նրա մահը։

1901 թուականից նա ըստանձնելով Թիֆլիզի առևտրական դպրոցում մշտական դասեր, վերջնականապես հաստատվում է Թիֆլիզում։ Ուսուցչությունը յանձն առնելով, նա այդ դպրոցում կեանք մտցրեց իր աշխոյժ երգերով և մանկական փոփոխակի հանդէսներով։ Բացի ուսումնարանական դասերից պարապում էր նաև մասնաւոր դասերով. իսկ ամառը պատրաստելով մի երկսեռ խումբ իր զեղեցիկ խմբերգերով մասնակցեց Թիֆլիզում՝ 1901 թ. աշնանը բացուած Կովկասեան ցուցահանդէսին։ Խումբը հագած է ազգային տարազով չորեր և ցուցահանդէսի բոլոր երգեցիկ խմբերի մէջ միակ օրիգինալ և կանոնաւոր խումբն էր համարվում։ Նա երկու ամիս շարունակ իր խմբով երգում էր զանազան ժողովրդական երգեր՝ պարերգերի հետ միասին։ Դեղարուեստի այս անուանաւոր զինուորը գաղափարի գարձած, վեհ գործի գրոչը ձեռին, անցնելով հսկայական քայլերով

Ղրիմից Կոմկաս գրաւեց չատերի սրտերը, ջախ-ջախեց նախապաշարումները, իր կրթող ոգևորող հա-մերգներով ազնուացրեց, սթափեցրեց և սիրել տուեց ամենքին հայ երգը։ Նա ժողովրդինը ժողովրդին էր տալիս։ Նա ծառայում էր այն գաղափարին, որ ժո-ղովրդին պէտք է կրթել տարբերական երաժշտութեան մէջ և աշխարհին էլ ծանօթացնել ժողովրդական եր-գերի հարստութեան հետ։ Այդ գաղափարը տարա-ծելու համար բեմ դուրս բերելով զանազան խմբեր, նա իր նպատակին հասնում էր որոշ չափով։ Ռամիկը զգացվում էր, որովհետև նրա սրտից, կեանքից էր երգում, իսկ միւս դասակարգերը հրճվում՝ որ լսում և սովորում էին ժողովրդական երգեր։ Նա երաժշտու-թեան վրայ մեծ կարծիք ունէր և իր այդ դրօշը նա միշտ բարձր էր պահում։

„Միայ կարծիք է, գրում է նա 1899 թ. Մշակի № 207, որ երաժշտութիւնը զուարճութեան համար է։ Ընդհակառակը, երաժշտութիւնը շատ լուրջ ֆակտոր է մեզ յուզելու և ուղղելու համար։ Հռչակաւոր Հենդելը արքունական պալատում եպիսկոպոսների ներ-կայութեամբ արատորիան (սրբազան երաժշտական հեղինակութիւն) կատարելիս, երբ թագաւորը ասում է «ինորհակալութիւն, Հենդել, որ մեզ զուարճա-ցրիր», Հենդել բացականչում է՝ ես նրա համար չեմ գրել, որ ձեզ ուրախացնեմ, այլ նրա համար, որ ձեր պակասութիւնները ուղղեմ“։

„Միայ է նմանապէս ասել, որ արտիստները այս ասպարէզով հեշտ ճանապարհ են գտել փող աշխա-տելու. ընդհակառակն, եթէ կայ աշխարհումն դժուար

գործ, դա երաժշտութեամբ անդրադարձնելու և դաստիարակելու գործն է"։

Եւ իսկապէս 1885 թուից սկսած իր բոլոր տուած հաւերգներից ընդհանրապէս նա նիւթական շահ չէ ստացել բացի վնասից։ Դեռ 1897 թ. Ղարաս-սու-Բաղարում տուած մի հաւերգի յայտարարութեան հետ տպած՝ նրա համաձայն հաշուից երևում է, որ մինչև այն ժամանակ նա մուտք է ունեցել իր բոլոր հաւերգներից 54,500 ռուբլի, իսկ ծախս 57,600 ռ., ուրեմն դեֆիցիտ 3,100 ռ. և սա եղել է նրա վարձատրութիւնը։ Մեռը լինելով ընտանիքի տէր, երբէք չի մտածել իր երեխաների նիւթական ապահովութեան մասին, ապրել է զրկանքով, շատ անգամ գնացել է նիւթական նեղ դրութեան մէջ, բայց չի վհատուել և թուլացել, այլ ընդհակառակը օգնել է դեռ ևս իրան զիմողներին նիւթականապէս, գործով թէ խորհուրդներով։ Նրա բարի սիրտը յայտնի էր ամենքին, ով նրա հետ ծանօթ էր. Նրա շնորհիւ գնացել և կատարելագործել են իրանց ձայները մեր հայ երգիչներից մի քանիսը։ 17 տարի շարունակաբար անխնդ կերպով նուիրուած է եղել իր սրբազան գործին և այդ ժամանակամիջոցում նա կազմել է 47 քաղաքներում 90 խումբ, տուել է 248 հաւերգ, պատրաստել է եկեղեցական խմբեր. Նրա ամեն մի հաւերգին մասնակցել են 40-ից սկսած մինչև 150 երիտասարդներ։ Նրա բոլոր խմբական երգեցողութիւններին մասնակցել են 6000 մարդ արական և իգական սեռից։ Նա գրել և մշակել է 320 երգեր, յօրինել է 67 ինքնուրոյն հեղինակութիւններ—թողել է ոտանաւորներ և արձակ գրուածքներ։ Նա իր գեղե-

ցիկ յոդուածներով ծանօթացրել է հայ մամուլի միջոցով երաժշտութեան մասին։ Աշխատակցել է գլխաւորապէս «Մուրճին» և «Մշակին». վերջինում, վերջին տարիներում նա տպում էր իր բովանդակիչ բեռնդիաները և այլ յոդուածներ՝ երաժշտութեան վերաբերեալ։ Նրա գործունէութեան և խմբական երգեցողութիւնների մասին գրել են բազմաթիւ հայ, ռուս, վրացի և այլ թերթեր՝ «Մեղու», «Մշակ», «Նոր-Դար», «Արձագանք», «Մուրճ», «Տարազ», «Աբարատ», «Սոխակ», «Զարիգիէ Շարքիէ», «Արևելք», «Հայրենիք», «Դրոշա», «Ոգեր», „Тифлисскій Листокъ“, „Югъ“, „Приазовскій Край“, „Каспій“, „Бакинскія Вѣдомости“, „Астраханскій Вѣстникъ“, „Астраханскій Листокъ“, „Казбекъ“, „Терскія Вѣдомости“, „Кубанскія Вѣдомости“, „Сѣверный Кавказъ“, „Крымъ“, „Салгиръ“, „Крымскій Вѣстникъ“, „Бессарабецъ“, „Бессарабскій Вѣстникъ“, „Одесскій Листокъ“, „Одесскія Новости“, „Новороссійскій Телеграфъ“, „Южное Обозрѣніе“, „Русское Слово“, „Театральное Извѣстіе“ և ուրիշները։

Վերջին տարիներում հաստատուելով Թիֆլիզում, նա իրան աւելի հանգիստ զգալով, աւելի ապահով կերպով նուիրուել էր իր սիրած գործին, բայց անգութ մահը գեռ 49 տարեկան հասակում վաղաժամ վերջ դրեց այդ մարմնացած ոգևորութեան։ Նա հանդաւ, թողնելով իր 4 փոքրահասակ զաւակներին, որոնց նա ինքը այնքան սիրում էր, որոնց կրթութեան մասին նա այնքան մտածում էր։ Նա իր ազատ ժամանակը միշտ նրանց էր նուիրում և նրանց մօտ

էր հանգստանում։ Երեխաների դաստիարակութեան վրայ նա առանձին հոգս էր տանում և մինչև անգամ այդ փոքրիկների համար յօրինում էր խնքնուրոյն, գեղեցիկ հեռաբրքիր մանկական զրոյցներ և պատմում նրանց։ 1902 թ. մարտի 27-ի առաւօտեան, անսպասելի կերպով, կարճ հիւանդութիւնից յետոյ, փախճանուեց Կարա-Մուրզան։ Զանազան կողմերից ստացած, նրա մահուան առիթով, հեռագիրները և նամակները արդէն գրաւական են, թէ որքան յարգուած և սիրված էր ժողովրդից ու ամենքից և որ նրա մեռնելով ժողովուրդը կորցրեց հայկական երգեցիկ խմբերի անխոնջ կազմակերպող, անձնուրաց, անփոխարինելի գործչին։ Նա կեանքի մէջ հանգիստ չը գիտէր և մահով միայն հանգստացաւ։



ԳԷՈՐԳ ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԵՈԶԵԱՆԻ

աշխատութիւններն ու հրատարակութիւնները։

1. Գ. Մելիք-Կարագեոզեան. Գերմանական օգնութեան ընկերութիւնները Ցանկա-Հայաստանի համար։ 1901 թ. . . . . գինն է 35 կ.
2. Գ. Մելիք-Կարագեոզեան. Գերմանիայի հայ ուսանողութիւնը։ 1901 թ. . . . . գինն է 20 „
3. **Ա. Агароняпъ.** „Башо“ (библіотека армянскихъ писателей № 1) 1903 г. . . . цѣна 20 к.
4. **В. М-скій.** Константинопольскія увеселенія. 1903 г. . . . . цѣна 20 „
5. **С. Уманецъ.** Современный Бабизмъ 1904 г. 50 „
6. Ցով. Կարապետեան. Քրիստաֆոր Կարա-Մուրզա Նրա կեանքը և գործունէութիւնը։ 1904 թ. գ. 60 կ.
7. Մարդու կազմութիւնը։ Կազմեց և հրատարակ. Գ. Մելիք-Կարագեոզեան։ 1904 թ. . . գինն է 60 „

Վաճառվում են՝ հրատարակչի մոտ (Гановская 22. Тифлисъ) և Թիֆլիզի գրաւաճառոցներին։